



ArmEIA

# ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՈՂՆՉԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ



Զեկարկող «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ



Նախագծող «ՆՈՎԱԼ» ՍՊԸ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն	էջ 4
2. Հավելվածներ	էջ 4
3. Օգտագործվող հապավումները	էջ 5
4. Նախնական գնահատման հայտի կազման իրավական հիմքերը և կատեգորիան	էջ 5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ	էջ 6
6. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը	էջ 7
6.1 Տարածքի իրավիճակային հատակագիծը	էջ 8
7. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	էջ 9
8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը	էջ 11
9. Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը	էջ 12
9.1 Օդային ավազան	էջ 12
9.2 Հողային ռեսուրսներ	էջ 17
9.3 Ջրային ռեսուրսներ	էջ 17
9.4 Բուսական, կենդանական աշխարհ	էջ 17
9.5 Մշակույթի և բնության հուշարձաններ	էջ 19
9.6 Վարչական և սոցիալական պայմանները	էջ 19
10. Ներկա և նախատեսվող գործունեության բնութագիրը	էջ 20
10.1 Արտադրության գործընթացների նկարագրությունը	էջ 20
10.2 Արտադրական հզորություններ և տեխնոլոգիական բնութագիրը	էջ 20
11. Թափոնների կազմը	էջ 26
11.1 Կենդանական ծագման թափոններ	էջ 26
11.2 Բժշկական թափոններ	էջ 26
ա. վարակիչ թափոններ	էջ 26
բ. ախտաբանաանատոմիական թափոններ	էջ 26
գ. կենսաբանական հեղուկներ	էջ 26
դ. ախտորոշիչ և փորձարարական գործունեությունից առաջացած կիրառման և օգտագործման ոչ ենթակա քիմիական նյութեր	էջ 26
ե. ցիտոստատիկ դեղեր	էջ 26
զ. սրածայր թափոններ	էջ 26
11.3 Քիմիական թափոններ	էջ 27
ա. լաբորատորիաներում առաջացող քիմիական նյութեր	էջ 27
11.4 Արտադրական թափոններ	էջ 27
11.5 Օրգանական թափոններ	էջ 27

12.Տեխնիկական - տեխնոլոգիական լուծումներ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր -----	էջ 28
12.1 Թափոնների տեղափոխում-----	էջ 29
12.2 Թափոնների կազմը-----	էջ 32
12.3 Գործունեության իրականացման հետևանքով առաջացող այլ թափոններ-----	էջ 32
12.4 Կեղտաջրերի հեռացում-----	էջ 33
12.5 Բնառեսուրսներ-----	էջ 33
13.Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը-----	էջ 35
13.1 Օդային ավազան -----	էջ 35
13.2 Հողային ռեսուրսներ-----	էջ 35
13.3 Ջրային ռեսուրսներ-----	էջ 35
13.4 Թափոններ-----	էջ 36
13.5 Աղմուկ և թրթռում-----	էջ 36
13.6 Աշխատանքի կազմակերպման ապահովում -----	էջ 36
13.7 Աշխատանքի անվտանգություն-----	էջ 37
14. Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական կառավարման միջոցառումների նախագիծ -----	էջ 38
15. Օգտագործված գրականություն -----	էջ 45
Հավելվածներ -----	էջ 46

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

Հայտ	ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում՝ վտանգավոր թափոնների վնասագերծման համալիրի վերազինում
Ձեռնարկող	«Էկոլոգիա Վ.Կ. Հ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճ. 4/1
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին՝ Էջմիածին-Մարգարա խճ. 4/1
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	/077/66-90-80, ekovkh@cmail.com
Պատվիրատու	
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	ՀՀ Արմավիր մարզ, ք. Էջմիածին
Աշխատանքային նախագծի մշակող	-
Գնահատման հայտի նախագծող	ArmEIA «Նովալ» ՍՊԸ
Հայտ մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	ք. Երևան, Բրյուսովի 6, հեռ. /012/21-10-01, /093/39-77-60 <a href="mailto:arm_eia@outlook.com">arm_eia@outlook.com</a>

## 2. Հավելվածներ

**Հավելված 1.** Տարածքի սեփականության իրավունքի վկայականը

**Հավելված 2.** Հողամասի հատակագիծը

**Հավելված 3.** Ջրօգտագործման թույլտվությունը

**Հավելված 4.** Գյուղատնտեսության նախարարության «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից տրված՝ մոխրի վերաբերյալ եզրակացություն

**Հավելված 5.** Կեղտաջրերի հեռացման պայմանագիր

**Հավելված 6.** Աղբահեռացման պայմանագիր

**Հավելված 7.** Հոսանք, գազ

**Հավելված 8.** VE100 մակնիշի վառարանի արատադրող՝ Գերմանական IFZW ընկերության գրությունը

**Հավելված 9.** Ֆիլտրի համապատասխան կոդերով

**Հավելված 10.** Կադաստրային չափագրման եզրակացությունը

**Հավելված 11.** Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկ

### **3. Օգտագործվող հապավումները**

**ՀՀ՝** Հայաստանի Հանրապետություն

**ՄՊԸ՝** Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

**ՊՈԱԿ՝** Պետական ոչ առևտրային կազմակերպություն

**ՇՄԱԳ՝** Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

**ՍԹԿ՝** Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

### **4. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը**

**4.1.** «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)- կարգավորում է կարգավորում է հիմնադրությամբ փաստաթղթի(ՇՄԱՌԳ) և նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի՝ իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

**4.2.** «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ( 1994թ.) – կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգերը և այլն:

4.3. «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

4.4. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի հոկտեմբերի 26-ի «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրաման, որի համաձայն իրականացվում է արտադրության և սպառման թափոնների դասակարգում՝ ըստ վտանգավորության դասի:

4.5. ՀՀ կառավարության 19.11.2014թ. «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշում:

## 5.Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ

«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊ ընկերությունը ներկայումս իրականացնում է բժշկական թափոնների վնասագերծում՝ այրման վառարանի միջոցով և նախատեսում է կատարել վերազինում՝ «Лямбда-датчик LT1» -ի տեղադրման միջոցով:

Նախատեսվող գործունեությունը համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 4-րդ հոդվածի, 1-ին մասի 7-րդ կետի, ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Նախատեսվող գործունեությունը համաձայն՝ Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 6)-րդ կետի, ա. ենթակետի դասվում է Ա կատեգորիայի: Այն ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման(ՇՄԱԳ) փորձաքննության երկու փուլով՝ նախնական և հիմնական:

Այժմ ներկայացվում է նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտը՝ համաձայն օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի.

Փորձաքննության ներկայացվող հայտը պարունակում է,

- 1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը,
- 2) նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը,
- 3) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման,

4) նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ),

5) շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը,

6) տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լուծումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:


Ներկայացված հայտի վերաբերյալ համաձայն՝ Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետի՝ տրվելու է տեխնիկական առաջադրանք:

Օրենքի և 2014թ. նոյեմբերի 19-ի ՀՀ կառավարության հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը հաստատելու մասին N1325 որոշման 3-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Էջմիածին քաղաքում կայացվել է նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներ, որի վերաբերյալ ազդակիր համայնքը և հանրությունը դրական է արձագանքել:

## **6. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը**

«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊ ընկերությունը ներկայումս իրականացնում է բժշկական թափոնների վնասազերծում՝ այրման վառարանի միջոցով: Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում, որը տեղակայված է քաղաքի արդյունաբերական հանգույցում՝ Էջմիածին-Մարգարա խճուղի 4/1 հասցեում: Գործունեության վայրից ամենամոտը գտնվում է Գրիբոյեդով գյուղը, որի մոտակա բնակելի տունը գտնվում է 330 մ հեռավորության վրա: Արդյունաբերական հանգույցին ամենամոտ գտնվող կառույցը՝ մոտ 60 մ հեռավորության վրա պահեստային շինությունն է: Գործունեության հարակից տարածքում գտնվում են նաև Էլեկտրաէներթակայան, Մարգարայի խճուղին, Մարգարայի խճուղու կողմում չմշակվող դաշտեր են:

6.1 Տարածքի իրավիճակային հատակագիծը



Նկար 1.




**Իրադրության սխեմա**  
«Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ



**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**

- Թափոնների այրման կայանք
- Արտադրահարթակ
- գ. Գրիբոյեղով
- Արտիմետ-Գրիբոյեղով ճանապարհ
- Գրունտային ճանապարհ





## 7. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Թափոնների գործող այրման կայանքը նախատեսված է բժշկական թափոնների ջերմային վնասազերծման համար: Թափոնների այրման միջոցով վնասազերծման կայանքը գործում է 2009թ-ից: Ընկերությունը 2008 թվականին ՀՀ Բնապահպանության նախարարությունից իր գործունեության՝ կենսօրգանական թափոնների այրման համար ստացել է համապատասխան փորձաքննական դրական եզրակացություն: Այնուհետև 2019թ.-ին շրջակա միջավայրի նախարարության կողմից «Թափոնների ոչնչացման համալիրի ընդլայնման» համար կրկին ստացել է դրական փորձաքննական եզրակացություն, ինչի համաձայն նախատեսվում էր միայն բժշկական թափոնների վնասազերծում: Ներկա վիճակում կատարվում է այրման միջոցով կինիկական թափոնների՝ վիրակապեր, գիպսակապեր, մեկանգամյա օգտագործման սպիտակեղեն, մեկանգամյա օգտագործման պարագաներ (ներառյալ ներարկիչներ, ներարկման ասեղներ, հերձադանակներ), մարմնի մասեր, օրգանների մնացորդներ, արյան պարկեր և պահածոյացված արյուն, ժամկետանց դեղորայք, ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղեր, պատվաստանյութեր, շիճուկներ, թմրանյութեր, հոգեմետ դեղեր և դեղագործական այլ ապրանքներ, լաբորատորիայի մնացորդներ, լուծողական միջոցներ և նմանատիպ այլ թափոնների վնասազերծում:

Վառարանն ապահովում է ժամում 100 կգ թափոնների վնասազերծում: Աշխատում է պիրոլիզի եղանակով: Կայանքում տեղի է ունենում երկաստիճան այրում: Ջերմային վնասազերծումը կատարվում է հիմնական և երկրորդային խցերում, ընդ որում երկրորդային խցում ջերմաստիճանը հասնում է մինչև 1300°C, ինչը թույլ է տալիս ամբողջությամբ վնասազերծել թափոնը:

Վարակիչ թափոնի պատշաճ վնասազերծման արդյունքում առաջացած մոխրի տեսքով թափոնը հեռացվում է որպես անվտանգ թափոն:

Սույն հայտով նախատեսվում է «Թափոնների ոչնչացման համալիրի վերազինում»:  
Նախատեսվող գործունեության իրականացման նպատակն է համալիրի վերազինումը, ինչի արդյունքում հնարավոր կլինի ոչնչացնել նաև արտադրական, քիմիական, սպանդային, կենդանական և այլ օրգանական թափոններ: Նախատեսվող վերազինման արդյունքում տեխնոլոգիական ցիկլը և տեղադրված սարքավորումները փոփոխության չեն ենթարկվում, դրանք վերազինվում են նոր սարքավորումով՝ «Лямбда-датчик LT1» (Լյամբդա-դատչիկ LT1), ինչը հնարավորություն կտա կայանքում թթվածնային հոսքի արագացման շնորհիվ ակտիվացնել այրման գործընթացը: Լյամբդա-դատչիկ LT1-միկրոպրոցեսորի բազայով, Լյամբդա-զոնդի համադրությամբ ունիվերսալ սարք է: Այն նախատեսված է վառարանի աշխատանքի ընթացքում արտանետվող գազերում, արտադրական սարքավորումներում թթվածնի կոնցենտրացիայի անմիջական և անընդհատ չափագրման և նմուշարկման համար: Սարքի անբաժանելի մաս հանդիսացող

պումպի օգնությամբ, կայանքում գազի սպառումը պահվում է կայուն մակարդակի վրա: Լյամբդա-զոնդ LS1-ը կառուցված է հիմնականում փակ ցինկե խողովակից՝ ամուր ելեկտրոլիտ, իսկ ներսից և արտաքինից ունի ազնիվ մետաղից կազմված ծակոտկեն շերտ՝ ելեկտրոդ:

Դյուրավառ բաղադրիչների գրանցման նպատակով որպես տարբերակ կարող է միացվել նաև համակցված KS1 զոնդը:

Վերազինման հիմնավորումը ստանալու նպատակով ընկերությունը դիմել է Գերմանական կողմին՝ IFZW ընկերությանը, որը հանդիսանում է VE100 մակնիշի վառարանի արտադրողը: Ընկերության կողմից ստացված գրությամբ հաստատվել է, որ բացի բժշկական թափոններից այն կարող է վնասագերծել արտադրական, սննդային, քիմիական, կենցաղային, օրգանական թափոնները, ինչպես նաև կենդանիների սպանդի մնացորդները:

Նկար 2.

### Սարքավորման սխեմատիկ պատկերը




## 8. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը

«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊ ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի արդյունաբերական հանգույցում: Հողի նպատակային նշանակությունը արտադրական է:

Համաձայն անշարժ գույքի գրանցման վկայականի (կցվում է հավելվածում)՝ տարածքը սեփականության իրավունքով տրամադրված է «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊ ընկերությանը: Հողամասի չափը կազմում է 0,208 հա: Արտադրական տարածքը պարսպապատված է՝ բարեկարգված և ասֆալտապատված: Պարիսպի (23,2մ<sup>2</sup>) երկայնքով և այլ մասերում, մոտ 100մ<sup>2</sup> մակերես տարածք կանաչապատված է՝ դեկորատիվ ծառերով, թփերով, խոտածածկույթով: Տարածքում առկա են՝ արտադրամասը (647.3մ<sup>2</sup>), պահակատունը(25.6մ<sup>2</sup>): Մնացածն ազատ բարեկարգված տարածք է, որտեղ տեղադրված են մեխանիկական մամլիչ, կոնտեյներներ:

Նկար 3.





## 9. Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը

**9.1 Օդային ավազան.** Էջմիածին քաղաքը գտնվում է մարզկենտրոն Արմավիր քաղաքից 25կմ, իսկ Երևանից 16-17կմ հեռավորության վրա: Հեռավորությունը երկաթուղուց (Էջմիածին կայարան) 15 կմ է, ճանապարհային հատումների հանգույցները հանդիսանում են Երևան-Արմավիր-Գյումրի, Աշտարակ-Մարգարա միջպետական նշանակության մայրուղիների և տեղական նշանակության ավտոճանապարհների հատումները: Էջմիածին քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 800-850մ նիշերի վրա: Քաղաքի կլիման բնութագրվում է ցուրտ ձմեռով և շոգ ամառով: Տարվա ամենացուրտ ամիսը հունվարն է, ամենատաքը՝ հուլիս-օգոստոսը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը  $+27.5^{\circ}\text{C}$ , իսկ տարեկան միջին տեղումները կազմում են 238մմ: Օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը կազմում է 15-20%: Քաղաքին բնորոշ են լեռնահովտային քամիները, որոնց արագությունը հասնում է մինչև 15-20 մ/վրկ:

Օդի ջերմաստիճանը														Աղյուսակ 1.		
Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արմավիր	870	-4.2	-1.6	4.9	12.4	17.4	21.6	25.7	25.1	20,0	12.9	5.7	-0.9	11.6	-31	41
Էջմիածին	853	-3,7	-1,2	5,1	12,2	17,1	21,2	25,2	25,1	20,1	13,0	6,1	-0,4	11,7	-31	41

### Օդի հարաբերական խոնավությունը

### Աղյուսակ 2.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %															
	ըստ ամիսների													Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	ամենացուրտ ամսվա, %		ամենաշոգ ամսվա, %	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Արմավիր	76	72	62	56	57	51	48	49	53	65	74	78	62	62	29	

**Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը**

**Աղյուսակ 3.**

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$ , մմ												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների												Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արմավիր	18	19	25	32	44	26	12	9	11	25	23	16	260	42	38	92
	19	21	26	37	42	21	38	31	35	30	30	20	42			
Էջմիածին	18	20	26	37	45	26	15	10	10	25	24	18	274	48	44	-
	14	22	25	26	29	46	34	25	27	25	46	18	46			

**Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը**

**Աղյուսակ 4.**

Բնակավայրի,	Օդի ջերմաստիճանը, °C						Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները և գրունտի սառչման խորությունը		Քամի	
						Տևողությունը, օր			Տեղում-	Գրուն-	Գերա-	Միջին

օդերևութաբանական կայանի անվանումը	ամենացուրտ օրվա, ապահովվածությամբ, %		ամենացուրտ հնգօրյակի, ապահովվածությամբ, %		ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը	Միջին ջերմաստիճանը ժամանակաշրջանի միջին օրական ջերմաստիճանով՝ ոչ բարձր, °C			միջին ամսական	միջին ամսական, ժամը 15-ին	ներքանակը նոյեմբերամարտ ամիսներին, մմ	տի սառչման առավելագույն խորությունը, սմ	կշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	արագությունները առավելագույնն ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
	0,98	0,92	0,98	0,92				0	8	10						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արմավիր	-23	-22	-21	-19	-4,6	-31	9,9	77	144	159	76	62	101	70	ՀսԱրմ	2,8
								-2,8	0,4	1,2						

**Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը**

**Աղյուսակ 5.**

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C						Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները, մմ		Քամի	
	Ապահովվածությամբ, %		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական տատանումը	միջին ամսական	միջին ամսական, ժամը 15-ին	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	Տեղումների օրական առավելագույն քանակը	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագությունները նվազագույնն ըստ ուղղությունների, հոկտիսին, մ/վ	
	0,95	0,99										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Արմավիր	32	34	41	33,2	15,5	48	29	159	42	Արլ	1,9	

ՀՀ տարածքի բնակավայրերի ցանկը և տեղակայման բնութագրերը

Աղյուսակ 6.

N	Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Կլիմայական շրջան
1	2	3	4
1.	Արմավիր	870	S
2.	Էջմիածին	853	S

Քամի

Աղյուսակ 7.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան վթռալուծումը, լորտա-յին ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհողությունների կրկնելիությունը, %	Միջինամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում			
			Միջին արագությունը, մ/վ												25	50	100	
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավային (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					16	17	18	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
Արմավիր	917,0																	
	հունվար	7	5	17	8	9	8	28	18	77	0,5	0,9	12	20	23	24	77	
		2,2	2,2	1,9	1,9	1,8	2,3	2,5	2,8									
	ապրիլ	5	7	28	11	9	9	20	11	52	1,3							
			2,8	3,4	2,5	2,7	2,7	3,7	3,0									
	հուլիս	3	8	31	16	11	7	16	8	55	1,1							
			2,1	2,5	1,9	2,2	1,1	2,6	2,7									
հոկտեմբեր	5	4	23	16	9	7	22	14	72	0,6								
		2,2	2,8	1,9	2,9	2,8	3,6	3,1										3,8



Քաղաքի բնակելի շենքերը, տները, հիմնարկները հիմնականում գազաֆիկացված են: Դրանք, ինչպես նաև ավտոտրանսպորտը Էջմիածին քաղաքի մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են: Շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունները նվազեցնելու նպատակով քաղաքապետարանը անընդմեջ քաղաքի տարածքում իրականացնում է կանաչապատման աշխատանքներ: Էջմիածին քաղաքի բոլոր կանաչ զանգվածների և ծառատնկված վայրերի ընդհանուր մակերեսը 245 հա է:

**9.2 Հողային ռեսուրսներ.** Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են լճային այրուվիալ նստվածքները, որոնք ներկայացված են ավազակավերով, ավազներով և գլաքարա-ճալաքարա-կոպճային առաջացումներով: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի: Ընդհանուր առմամբ Արմավիրի մարզի տարածքում տարածված են հումուսից աղքատ գորշ հողերը, աղոտ-ակկալի, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լանդշաֆտը կիսաանապատային է, կան նաև անապատային տեղամասեր:

Տարածաշրջանի ցածրադիր մասերում տարածված են կիսաանապատային, նախալեռնային շրջաններում՝ խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը: Արաքսի և նրա վտակների փոխար փերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալված հողեր՝ ակկալահողերը:

Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փոխար նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

Արտադրամասը տեղակայված է երկար տարիներ գործող արտադրական տարածքում՝ գործունեությունը սկսել է 2009թ.-ից, այսինքն երկար տարիներ այն գտնվում է մարդածին գործունեության գոտում:

Գործարանի վերազինումը նախատեսվում է իրականացնել արտադրամասի տարածքում, վերազինման ընթացքում նոր տարածքներ չեն օտարվելու և նոր հողային ռեսուրսների խախտում չի կատարվելու:

**9.3 Ջրային ռեսուրսներ:** Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը մտնում է Արարատյան արտեզյան ավազանի մեջ: Արարատյան արտեզյան ջրավազանը ներկայացված է երեք ջրատար հորիզոններով: Առաջին հորիզոնը գրունտայինն է, երկրորդը՝ թույլ ճնշումային և երրորդը՝ ճնշումային: Այս բոլոր հորիզոններն իրարից բաժանվում են ջրամերժ կավային շերտերով: Գրունտային ջրերի

մակարդակը Էջմիածին քաղաքի տարածքում տատանվում է 4-10մ-ի միջև: Գործունեության հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են:

**9.4 Բուսական, կենդանական աշխարհ.** Մարզի տարածքը գտնվում է Երևանի և Արագածի ֆլորիստիկ շրջաններում, որոնց համար տիպիկ են Հայաստանի ֆլորայի 170-ից ավելի հազվագյուտ և անհետացող և 50-ից ավելի էնդիմիկ տեսակներ: Գերակշռում են կիսասանապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (*Alismataceae*)՝ հովվափող լանցետային (*Alisma lanceolatum*), սովորական նետախոտը (*Sagittaria sagittifolia* L.), եռատերև նետախոտը (*Sagittaria trifolia* L.), հովանոցազգիներից՝ սկտոնոլեմ խոշորաբաժակը (*Actinolema macrolema*), աննշմարակող անհարթապտուղը (*Aphanopleura trachisperma*), երնջակ Վանատուրի (*Eringium vanaturii*), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (*Amberboa moschata*), խոզանափուշ բարակը (*Caucinia tenella*), կանգար տուրնեֆորի (*Gundelia tournefortii*), կաթնուկ Թախտաջյանի (*Lactuca takhtadzhianii*), խաչածաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (*Isatis ornitorhynchus*), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (*Sambucus tigranii*), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (*Acanthophyllum pungens*), ալոխրուլա բունգեի (*Allochrysa bungei*), մեխակ Լիբանանի (*Dianthus libanotis*), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (*Bienertia cycloptera*), օջան Թամամջյանի (*Salsola tamamschjanae*), սպանախ քառաեզ (*Spinacia tetrandra*), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (*Astragalus paradoxus*), հացհամեմ գլխիկավոր (*Trigonella capitata*), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (*Frankenia pulverulenta*), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (*Nitraria schoberi*), հացազգիներից՝ այծակն հաստ (*Aegilops crassa*), ցորեն արարատյան (*Tritium araraicum*), կարմրանազգիներից՝ կարմրան (*Tamarix*), կարմրան ութաեզանի (*Tamarix octandra*), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (*Tetradiclis tanella*) և այլն: Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից մարզի տարածքում հանդիպում են ադուտների և կիսասանապատային բուսականության հետևյալ ներկայացուցիչները, մասնակիորեն՝ ինկեղեզ ճահճային (*Acorus calamus* L.) և այլն:

Քաղաքի տարածքում բուսականությունը ներկայացված է քաղաքային բարեկարգման մաս կազմող արհեստականորեն հիմնած ծառերով և թփերով, ինչպես նաև անհատական տնամերձ հողակտորներում՝ պտղատու ու խաղողի այգիներով և բանջարաբուստանային կուլտուրաներով:

Տարածաշրջանում հանդիպում են ողնաշարավոր, հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67-ը՝ թռչուն, 15-ը՝ սողուն և 3-ը՝ երկկենցաղ: Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L.

(աղվե ս), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L.(կաքավ), *Grus grus* L. (կոռնկ) և այլն: Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր տարածքված կենդանիներից են՝ գայլը, աքիսը, եղեգնակատուն, ջրասամույրը, աղվեսը, կոնչան բադը, ճահճակուղբը, լճագորտը, մոխրագույն առնետը ժայռային մողեսը, սողուններից՝ սովորական լորտուն և միջատները: Անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճռիկը, մորեխը, կաղամբաթիթեռը և այլն:

Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճողկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (*Larus armeniacus* But.), հազվադեպ հանդիպող Արարատյան որդան կարմիրը (*Porphyrhophora hamnielii* Brandt): Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներից հանդիպում են, մասնակիորեն՝ հարավային պայտաքիթը (*Rhinolophuseuryales*), վարդագույն հավալուսն(*Pelecanus onocrotalus*), քաջահավ (*Plagadis falcinellus* Linneaus), փոքր ձկնկուլ(*Phalocrococorax pygmaeug* Linneaus) և այլն

Քաղաքում չկան մարզի համար տիպիկ հազվագյուտ կամ էնդեմիկ վայրի բնության, ինչպես նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում ներառված բուսատեսակներ և կենդանատեսակներ:

Նախատեսվող գործունեությունը նոր տարածքներ չի պահանջում, ուստի բուսական և կենդանական աշխարհի վրա որևէ ազդեցություն չի ունենալու:

Բնության հատուկ պահպանվող, ինչպես նաև էկոլոգիական տեսակետից զգայուն տարածքները քաղաքում բացակայում են:

**9.5 Մշակույթի և բնության հուշարձաններ.** Էջմիածին քաղաքը հարուստ է եկեղեցական համալիրներով, բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններով, թանգարաններով: Քաղաքում առկա են 4-10-րդ դարերում կառուցված 7 վանքային համալիրներ, գործում են 5 եկեղեցի, որոնցից գլխավորը՝ Էջմիածնի Մայր Տաճարն է: Համայնքն ունի մեծ հնարավորություն տուրիզմի զարգացման համար:

**9.6 Վարչական և սոցիալական պայմանները.** Էջմիածին քաղաքը գտնվում է Արմավիրի մարզում: Էջմիածին քաղաքի վարչական տարածքը կազմում է 852,24հա, բնակչությունը՝ 57503 մարդ, որոնցից տղամարդիկ կազմում են 48,5 %-ը, իսկ կանայք՝ 51,5 %: Քաղաքն ունի կոյուղու մաքրման կայան, ջրամատակարարման և ջրահեռացման, ոռոգման համակարգեր: Քաղաքում գործում են զինու և կոնյակի գործարաններ: Համայնքի գերխնդիրներից է բնակչության սոցիալտնտեսական, մշակութային և հանգստի պայմանների բարելավումը:

Ներկա վիճակում ընկերությունում փաստացի աշխատողների թվաքանակը կազմում է 18 մարդ, որից ինժեներական՝ 6 մարդ, բանվորներ և այլ աշխատողներ՝ 12 մարդ:

Արտադրամասի վերազինման արդյունքում նախատեսվում նոր աշխատատեղեր(3 մարդ), աշխատողների ընդհանուր քանակը կազմելու է 21 մարդ, որից ինժեներական՝ 7 մարդ(1քիմիկ-տեխնոլոգ), բանվորներ և այլ աշխատողներ՝ 14 մարդ:

## **10. Ներկա և նախատեսվող գործունեության բնութագիրը**

**10.1 Արտադրության գործընթացների նկարագրությունը.** IFZW ընկերության արտադրության VE 100 մակնիշի կայանքը տեղադրվել է գերմանական ընկերության մասնագետների կողմից: Փորձարկումը, կարգաբերումը, ինչպես նաև սկզբնական շրջանում շահագործումը կատարել են ընկերության մասնագետները: Այդ ընթացքում «ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ.» ՍՊԸ անձնակազմը մասնակցել է աշխատանքներին, մի քանի առանցքային աշխատատեղերի համար մասնագետների լրացուցիչ դասընթացներ են կազմակերպվել: Կայանքի տեղադրումից հետո, կատարվել է հիմնական և լրացուցիչ հնոցների տեխնոլոգիական չորացում, որը տևում է 28-36 ժամ, որից հետո փորձնական այրում և կարգաբերում:

Նշված ժամականաշրջանում գերմանական և տեղի ընկերության մասնագետների կողմից կատարվել է նաև համատեղ՝ բժշկական, արտադրական և քիմիական թափոնների փորձնական այրում, որի արդյունքում ստացվել են նմանատիպ արդյունքներ՝ ինչ բժշկական թափոնների դեպքում: ՇՄԱԳ-ի փուլում, երբ կտրվեն գործունեության իրականացման նախագծային լուծումները, ընկերության կողմից՝ համապատասխան մասնագետների ներկայությամբ, կկատարվի 90/10 հարաբերակցությամբ արտադրական, քիմիական և բժշկական թափոնների փորձնական այրում: Այրումից առաջացած մոխիրը կներկայացվի համապատասխան մասնագիտական կազմակերպությանը՝ անալիզի նպատակով, որի արդյունքերը կներկայացվեն հաշվետվության մեջ:

**10.2 Արտադրական հզորություններ և տեխնոլոգիական բնութագիրը.** ընկերության կողմից շահագործվում է գերմանական IFZW ընկերության արտադրության VE100 մակնիշի կիզարանը, որը ապահովում է ժամում 100 կգ թափոնների վնասազերծում՝ ջերմային մշակման միջոցով: Կայանքը տեղադրված է և կարգաբերվում է ամբողջության արտադրողի ուժերով:

IFZW կայանքը գործում է պիրոլիզի եղանակով: Վառարանի ջերմունակությունը՝  $H_u=3000.00-4000/00$ կկալ/կգ= $12.57-16.76$ ՄՋ/կգ:

## Կայանքի տեխնիկական բնութագիրը

Տեսակ (մակնիշ)	VE 100
Այրման հզորությունը	100 կգ/ժամ
Լցաքաշի ջերմունակությունը առավելագույնը՝	16/76ՄՋ/կգ
Այրիչների համակարգը՝ H=10 000,41.9ՄՋկգ Այրիչների արտադրատեսակը՝ Գլխավոր այրիչ՝ 1-աստիճան Հզորությունը (միացում) Լրացուցիչ այրման այրիչ՝ Հզորությունը(միացում)	ELCO  186կՎտ, EL03>20-1D 372կՎտ, EL3A 45-2D
Բեռնում՝ Նյութերի բեռնման համար, առավելագույնը Բեռման ժամանակահատվածը	Ձեռքով, դռան միջով (դռնով) 100կգ  Յուրաքանչյուր 40 րոպե
Էլ./սնուցում Միացում	220/380 վ 50 Հց, 12կՎտ
Մոխրի Հեռացում	Ձեռքով
Արտազատվող գազի քանակը 350° C –ի դեպքում	7051մ <sup>3</sup> /ժամ
Ծխատար խողովակի տրամագիծը, նվազագույնը	450x450մմ
Վառարանի չափսերը՝ Երկարություն Լայնություն	 2592մմ 1572մմ

Բարձրությունը	2038մմ
Վառարանի քաշը	8400 կգ

Արտադրամասում հավաքված թափոնները տեղադրվում են սայլակի մեջ և տեղափոխվում սնուցման հարթակ: Միանում են հիմնական և երկրորդ աստիճանի այրիչները և ջերմաստիճանը հնոցում հասնում է 1000-1200°C, որից հետո սայլակի պարունակությունը լցվում է հնոցի մեջ: Վառարանում այրումը կատարվում է ավտոմատ համակարգով, որտեղ տեղի է ունենում երկաստիճան այրում: Առաջին աստիճանի հնոցն ունի կոնաձև կառուցվածք և թափոնների այրումից առաջացած պինդ մասնիկները լցվում են կոնի տակ գտնվող ընդունիչ տարողության մեջ: Ծխագազերը տրվում են երկրորդ աստիճանի հնոց, որն ունի գլանաձև կառուցվածք: Այստեղ շնորհիվ երկրորդ այրիչի, որի հզորությունը կրկնակի մեծ է առաջին աստիճանի այրիչից և հավասար է 3720 կՎտ, ջերմաստիճանը բարձրացվում է մինչև 1300° C(փաստացի), ինչը թույլ է տալիս առավելագույն չափով այրել թափոնները: Երկրորդ հնոցում նստում է պինդ մասնիկների որոշ խմբաքանակ՝ մրի տեսքով: Մուրը մաքրվում է սեղմված օդի օգնությամբ, հավաքվում է պոլիէթիլենային պարկերի մեջ և հետագայում նորից այրվում է վառարանում՝ 1 ամսում 10-15 կգ :

Վառարանի փաստացի գործունեության ընթացքում խողովակներում կուտակվող մոխրախարամային նստվածքների մաքրում չի իրականացվում, քանի որ վառարանն աշխատում է առավելագույն արդյունավետությամբ: Խողովակներում մոխրախարամային նստվածքները հեռացվում կամ մաքրվում են, երբ վառարանը 1 ամիս ժամկետով կանգնեցվում է վերանորոգման: Խողովակների մաքրումը կատարվում է լաթերի օգնությամբ՝ չոր եղանակով: Նստվածքը՝ մոտ 20 կգ հավաքվելու է մետաղյա տարանների մեջ և հետագայում լաթերի հետ միասին ենթարկվելու է երկրորդային այրման: Այրման արդյունքում առաջացած մոխիրը տեղափոխվելու է աղբավայր՝ համաձայն Էջմիածնի «Բնակարանայի կոմունալ վարչություն» հետ կնքված աղբահանության պայմանագրի՝

**Հավելված 6:**

Կայանքն ունի ֆիլտրացիոն համակարգ, որը նվազեցնում է մթնոլորտ արտանետվող գազերում վտանգավոր նյութերի բաղադրությունը և քանակական կազմը: Ծխագազերը հեռացվում են հովացման ապարատ, որից հետո առաջին աստիճանի փոշեկլանիչ ցիկլոն, որտեղ կատարվում է կոշտ փոշու հեռացում: Ցիկլոնից հետո ծխագազերը տրվում են Ս-նման խողովակ, որի հատակին նստում են պինդ մասնիկները: Պինդ մասնիկների վերջնական մաքրումը տեղի է ունենում երկրորդ աստիճանի ցիկլոնում: Վառարանում այրման գործողության վերջում ֆիլտրերի(ձեռքի) արտաքին մակերևույթի վրա է հավաքվում հեռացող ծխագազերում առկա փոշին: Ֆիլտրերը պատրաստված են հատուկ՝ ոչ գործվածքային նյութից: Ֆիլտրերի բնութագիրը ներկայացվում է՝ **Հավելված 9:**

Գործունեության ընթացքում օգտագործվում է 100հատ ֆիլտր, որոնք փոխվում են մոտ 6 ամիսը 1 անգամ կամ երբեմն ավելի հաճախ: Ֆիլտրերի փոխելու հաճախականությունը կախված է թափոնների այրման քանակից, որակից, բեռնման հաճախականությունից:

Ջերմային գազերը կրկնակի այրումից հետո կորցնում են իրենց հոտավետությունը, մտնում են ջերմափոխարկիչ, որտեղ հեռացող գազերը սառեցվում են մինչև 150°C՝ հակասառիչով(անտիֆրիզ) հազեցած հովացման շրջանառու համակարգի միջոցով: Վառարանում գտնվող ծխաքարշն ապահովում է ամբողջ սարքում այրում կատարելու համար անհրաժեշտ ցածր ճնշումը և հեռացող գազերի տեղափոխումը դեպի ծխատար խողովակ: Ծխաքարշը միանում է անմիջապես՝ վառարանի միացման ժամանակ: Ծխագազերը օդամղիչի օգնությամբ արտանետվում են դեպի մթնոլորտ 20մ բարձրություն ունեցող ծխատար խողովակի միջոցով:

Այրման գործընթացի ավարտից հետո գլխավոր այրիչն (գորելկա)ավտոմատ անջատվում է: Վառարանն աշխատում է 2 հերթափոխային գրաֆիկով, կարող է աշխատել նաև 24 ժամյա ռեժիմով և նախատեսված է միայն հատուկ վտանգավոր նյութերի այրման համար: Վառարանի աշխատանքի ընթացքում Ժամանակ առ ժամանակ կատարվում է կոմպրեսորներում յուղի ավելացում:

Հանաձայն «Установка для сжигания вредных отходов в г. Эчмиадзин, Республика Армения – печная линия № 1» փաստաթղթի(էջ 3-12)՝ այլ թափոնների այրման դեպքում վառարանը շահագործող ընկերությունը պետք է նախապես խորհրդակցի սարքավորումն արտադրող ընկերության հետ: Այդ նկատառումներից ելնելով, ընկերությունը դիմել է գերմանական IFZW ընկերությանը և ստացել է համապատասխան գրությունը, որով թույլատրվում է արտադրական և քիմիական թափոնների այրումը՝ **Հավելված 8:**

Նախատեսվող «Лямбда-датчик LT1» նոր սարքով այրման համալիրի վերազինումը չի հանգեցնելու վերջինիս՝ գոյություն ունեցող տեխնոլոգիական ցիկլի, արտադրողականության և տեղադրված սարքավորումների փոփոխությանը: Չի լինելու նաև հզորությունների ավելացում, քանի որ վառարան բեռնվող թափոնների քանակը մնալու է նույնը՝ 100 կգ/ժամ: Փոխվելու է այրման ենթակա թափոնների հարաբերակցությունը.


- 90%՝ բժշկական թափոններ,
- 10%-ը՝ այլ արտադրական թափոններ:

Կայանքը վերազինվելու է «Лямбда-датчик LT1» նոր սարքավորումով, որը հնարավորություն կտա այրման վառարանում ակտիվացնել այրման գործընթացը՝ թթվածնային հոսքի արագացման շնորհիվ: Լյամբդա-դատչիկ LT1-ը միկրոպրոցեսորի բազայով, Լյամբդա-զոնդի համադրությամբ ունիվերսալ սարք է: Սարքը նախատեսված է արտանետվող գազերում, արտադրական սարքավորումներում թթվածնի կոնցենտրացիայի անմիջական և անընդհատ չափագրման և նմուշարկման համար: Սարքի անբաժանելի մաս հանդիսացող պոմպի օգնությամբ վառարանում գազի

սպառումը պահում է կայուն մակարդակի վրա: Լյամբդա-զոնդ LS1-ը կառուցված է հիմնականում փակ ցինկի երկօքսիդի խողովակից՝ ամուր էլեկտրոլիտ, իսկ ներսից և արտաքինից ունի ազնիվ մետաղից կազմված ծակոտկեն շերտ՝ էլեկտրոդ:

Վառարանում 650°C և ավելի աշխատանքային ջերմաստիճանի դեպքում, թթվածնի կոնցենտրացիան գազում որոշելու համար, էլեկտրոդային բջիջով անընդհատ տրվում է 0,4-1,0 վոլտ ճնշում և միլիամպեր/մետրի օգնությամբ չափվում է կոշտ էլեկտրոլիտով անցնող թթվածնախոնային հոսանքը:

**Թթվածնային զոնդի չափման և տեսակավորման, ջերմաստիճանի ազդեցության, մաշվածության, ինչպես նաև զոնդի գրաֆիկական բնութագրում փորձնական գազի չափաքանակի գրաֆիկ**




Ներկայացված գրաֆիկը ցույց է տալիս, որ թթվածնի պարունակության նմուշարկման նպատակով պարտադիր չէ գործակցի համամասանությունը կամ փորձնական գազի չափը: Բավական է համադրել  $I$  զոնդի հոսանքի օդի նմուշառումը թթվածնի կոնցենտրացիային  $O_2=21\%$  և նշագրելով կետը անցկացնել ուղիղ գիծ դեպի զրոյական կետ ( $I=0$ , ( $O_2$ )=0):

Գործնականում դա նշանակում է, որ տրամաչափումը/զոնդի տրամաչափի վերահսկումը, կարող է իրագործվել պարզ եղանակով, երբ չափված օդի հարաբերակցությունը թթվածնի հետ 21/21 է: Կոշտ էլեկտրոլիտի և էլեկտրոդների ջերմաստիճանը ներառված չէ զոնդի ձայնային ազդանշանի մեջ: Այնուամենայնիվ, այն սահմանում է զոնդի ներքին դիմադրումը կամ սահմանային հոսանքը, ինչպես նաև թթվածնային կոնցենտրացիայի նմուշարկման տարածքը:



# Կայանքի տեխնոլոգիական սխեման

Գծագիր 1. Թափոնների այրման կայանքի տեխնոլոգիական սխեմա



Գծագիր 1-ում բերված տեխնոլոգիական սխեմայի սարքավորումների ցանկը

N	Սարքավորման/ապարատի/ անվանումը
1.	Ընդունիչ բունկեր
2.	Մուուցիչ
3.	Առաջնային այրման հնոց
4.	Նստվածքի ընդունիչ
5.	Լրաայրման խուց
6.	Առաջնային այրման հնոցի գազային այրիչ
7.	Լրաայրման խուցի գազային այրիչ
8.	Ծխագազերի հովացուցիչ /անտիֆրիզ/
9.	Լյամբրա դատչիկ
10.	Առաջնային ցիկլոն
11.	Նստեցուցիչ
12.	Երկրորդային ցիկլոն
13.	Օդամղիչ
14.	Ծխնեղույզ

## 11. Թափոնների կազմը

Այրման կայանքը նախատեսված է կենդանական, բժշկական, սպանդային, անասնապահական, քիմիական, արտադրական, օրգանական թափոնների ջերմային վնասագերծման համար: Ջերմային վնասագերծումը կատարվում է հիմնական և երկրորդային խուցերում, ընդ որում երկրորդային խցում ջերմաստիճանը կարող է հասնել 1300°C, ինչը թույլ է տալիս ամբողջությամբ վնասագերծել թափոնը:

**11.1 Կենդանական ծագման թափոններ**, հիմնականում սպանդանոցներում առաջացող անասունների մնացորդներ են:

**11.2 Բժշկական թափոններ**, որոնք բաժանվում են՝

**ա. վարակիչ թափոններ.** որոնք իրենց հերթին դասակարգվում են՝ ա. միկրոկենսաբանական թափոններ - լաբորատոր աշխատանքի համար նախատեսված վարակիչ հիվանդությունների հարուցիչների կուլտուրաներ և շտամներ, վիրահատական և վարակիչ հիվանդություններից մահացածների դիակներումներից, վարակիչ հիվանդներից (արտաթորանքներ, վարակված կամ վիրաբուժական վերքերի վիրակապեր, մարդու արյամբ կամ կենսաբանական այլ հեղուկներով աղտոտված հագուստ), հեմոդիալիզ ստացող հիվանդներից առաջացած թափոններ (դիալիզի խողովակներ, ֆիլտրեր, միանվագ օգտագործման սրբիչներ, խալաթներ, ձեռնոցներ և լաբորատոր խալաթներ), լաբորատորիաներում փորձարարական աշխատանքների համար վարակված կենդանիների դիակներ, ցանկացած միանվագ օգտագործման գործիք կամ առարկա, որը շփում է ունեցել վարակված մարդկանց կամ կենդանիների հետ,

**բ. ախտաբանաանատոմիական թափոններ** - վիրահատության, դիակներում և այլ գործընթացների ընթացքում հեռացված հյուսվածքներ, օրգաններ, մարմնի մասեր, արյուն, կենսաբանական հեղուկներ, կենդանիների դիակներ և այլ նմանատիպ օրգաններ և մարմիններ,

**գ. կենսաբանական հեղուկներ** - հեղուկներ, որոնք իրենց մեջ կարող են վարակիչ հիվանդությունների հարուցիչներ պարունակել, արյուն, արյան բաղադրամասեր, ավիշ և օրգանիզմում առաջացող բոլոր հնարավոր կենսաբանական հեղուկները և դրանցով աղտոտված առարկաներ, նյութեր, փափուկ գույք,

**դ. ախտորոշիչ և փորձարարական գործունեությունից առաջացած կիրառման և օգտագործման ոչ ենթակա քիմիական նյութեր**, ինչպես նաև մաքրման, ախտահանման և այլ գործընթացների ընթացքում առաջացող նյութեր, որոնք ունեն հետևյալ հատկություններից առնվազն մեկը. ա. թունավոր/տոքսիկ, բ. քայքայիչ՝ թթուներ  $Ph < 2.0$  և հիմքեր  $Ph > 12$ :

**ե. ցիտոստատիկ դեղեր**, այդ դեղերով բուժվող հիվանդների արտաթորանքներ:

**զ. սրածայր թափոններ** - կրկնակի օգտագործման կամ վերամշակման ոչ ենթակա ներարկիչներ, ներարկման ասեղներ, կարեր դնելու ասեղներ, վիրադանակներ և այլ

սայրեր, նշտարներ, սղոցներ, դանակներ, կոտրված կամ չկոտրված ապակի, սրվակներ, մեխեր և այլն:

### **11.3 Քիմիական թափոններ.**

**ա. լաբորատորիաներում առաջացող քիմիական նյութեր.** դյուրավառ, դ. ռեակտիվ՝ պայթուցիկ, ջրի նկատմամբ ռեակտիվ, ջերմության նկատմամբ զգայուն քիմիական նյութեր:

**11.4 Արտադրական թափոններ.** պոլիպրոպիլենից պարկեր, անվադողեր, օգտագործված յուղեր և քսուկներ, յուղոտված լաթեր, օգտագործված լամպեր (սնդիկ չպարունակող), ապակյա շշեր և այլն:

**11.5 Օրգանական թափոններ.** սննդամթերք, սննդային հավելումներ թափոնների կազմի հիմնական բաղադրիչ հանդիսացող օրգանական միացություններ:

Այս թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի հոկտեմբերի 26-ի «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանի պատկանում են վտանգավորության 1-5 դասերին:

Վնասազերծվող թափոնները դասվում են վտանգավոր թափոնների շարքին, ուստի դրանց վնասազերծման գործունեությամբ զբաղվելը ենթակա է լիցենզավորման:

**Համաձայն կայանքի տեխնոլոգիական բնութագրի՝ պլաստմասե իրերի և այլ նմանատիպ նյութերի այրումը պետք է հասցնել նվազագույնի: Հատկապես անթույլատրելի է հալոգեն պարունակող, ինչպես PBX նյութերի այրումը, քանի որ նրանցում պարունակող քլորը և ֆտորը նպաստում են դիոկսին(ֆուրանների) առաջացմանը:**

Ըներությունը հանձնող կազմակերպություններից կամ անհատներից թափոնները ընդունելու է վերջիններիս կողմից հանձնվող թափոնների վրա համապատասխան պիտակի առկայության դեպքում, որ կպարունակի թափոնների կազմի և բնութագրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:

**Այդ մասին մասին հատուկ նշումներ են արվելու թափոնների վնասազերծման պայմանագրերում:**

Վերը նշված թափոնների այրման արդյունքում մնում են կոշտ մասնիկներ(մոխիր): Այս թափոնը ՀՀ բնապահպանության նախարարի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանի հավելվածի՝ ներկայացված է 3130180001013 ծածկագրի տակ՝ «թափոնների այրման մոխիր (այրման վառարաններ)» տողում:

Ըստ արտադրող կազմակերպության տվյալների՝ այրման մնացորդների քանակը կարող է կազմել թափոնների ընդհանուր քանակի 2-5%, միջին՝ 3.5%: Առաավելագույն արտադրողականությամբ՝ 720տ/տարի աշխատելու դեպքում տարեկան մնացորդային մոխրի քանակը կազմելու է 25,2տ/տարի, իսկ առավելագույն 5%-ի դեպքում՝ 36 տ/տարի:

Վարակիչ թափոնի պատշաճ վնասագերծման արդյունքում առաջացած թափոնը հեռացվում է որպես անվտանգ թափոն՝ մոխրի տեսքով: Ընկերությունը բժշկական թափոնների այրման նպատակով դիմել է ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Ագրոքիմիական Ծառայություն» ՊՈԱԿ-ին՝ փորձաքննության միջոցով առաջացած մոխրի կազմությունը ճշտելու համար: Համաձայն վերջինիս կողմից տրված տեղեկանքի՝ այրման արդյունքում առաջացած մոխիրը 1200°C ջերմաստիճանում վերամշակելուց հետո կարող է հեռացվել աղբավայր:

Վառարանի գործարկման ժամանակ գերմանական և տեղի ընկերության մասնագետների կողմից կատարվել է նաև արտադրական, քիմիական և բժշկական թափոնների փորձնական այրում, որի արդյունքում ստացվել են նմանատիպ արդյունքներ՝ ինչ միայն բժշկական թափոնների դեպքում: ՇՄԱԳ-ի փուլում, երբ կներկայացվի գործունեության իրականացման նախագծային լուծումները, ընկերության կողմից՝ համապատասխան մասնագետների ներկայությամբ, կկատարվի 90/10 հարաբերակցությամբ արտադրական, քիմիական և բժշկական թափոնների փորձնական այրում: Այրումից առաջացած մոխիրը կներկայացվի համապատասխան մասնագիտական կազմակերպությանը՝ անալիզի նպատակով, որի արդյունքերը կներկայացվի հաշվետվության մեջ:

## **12. Տեխնիկական - տեխնոլոգիական լուծումներ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր**

Վառարանում թափոնների և գազի այրման հետևանքով առաջացող ծխագազերը ֆիլտրերի օգնությամբ մաքրվում և մթնոլորտ են արտանետվում 450x450մմ տրամագծով և 20մ երկարություն ունեցող պողպատյա ծխատար խողովակով: 850<sup>0</sup>-ից բարձր ջերմության դեպքում դուրս եկող գազերը խցում ենթարկվում են գերայրման, կորցնում են իրենց հոտավետությունը: Ջերմային մշակման ժամանակ դուրս եկող գազերը լրացուցիչ ֆիլտրվում են:

Այրման վերջում հեռացվող գազերում առկա փոշին նստում է ֆիլտրի վրա՝ նստվածքի ձևով: Աղտոտված ֆիլտրերը փոխվում են:

Այժմ գործունեության իրականացումից (բժշկական թափոնների այրումից)՝ 1 արտանետման աղբյուրից մթնոլորտ են արտանետվում 6 անվանումով աղտոտող նյութեր՝ կախված մասնիկներ(մոխիր), ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ(երկօքսիդ), խմբային անհիդրիդ, քլորաջրածին, ածխաջրածիններ: Համաձայն 2017թ. «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՄՊ ընկերության կողմից տրված սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվային նախագծի՝ գործող կայանքի այրման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ընդհանուր քանակը կազմում է 29,3 տ/տարի, որն ավելի ցածր է

շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված հաշվետվությունում հաշվարկված արտանետումների քանակից (31,117տ/տարի):

Վերազինման արդյունքում օդային ավազան արտանետումների քանակի ավելացում չի ապաստում:

Գործունեության տարածքն ապահովված է էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման համակարգերով:

Ընկերությունը վառարանի շահագործման համար ունի անհրաժեշտ բոլոր տեխնիկական փաստաթղթերը, թույլտվությունները, համաձայնությունները:

### **Հավելվածները կցվում են:**

#### **12. 1 Թափոնների տեղափոխում**

Ընկերությունը Պատվիրատուներից բշկական՝ ախտաբանաանատոմիական թափոնների հավաքումը և տեղափոխումը իրականացնում է հատուկ գործարանային կահավորմամբ 3 հատ «Գազել» մակնիշի ավտոմեքենաներով՝ համապատասխան ներքին կահավորմամբ(թերմոս): Բժշկական այլ(կենսաբանական) թափոնները ևս տեղափոխվում են այդ մեքենաներով՝ առանձնացված հատուկ տարաններում: Ընկերության տարածքում ախտաբանաանատոմիական բժշկական թափոնները հավաքվում են հովացման համակարգով ապահովված, 4x12մ չափսեր ունեցող պահեստում՝ կահավորված հատուկ տիպի սառնարանային համալիրով: Կենսաբանական հեղուկները տարանջատվում են այլ թափոններից և պահվում են հերմետիկ փակվող տարաններում՝ նույն պահեստում: Իսկ պլաստմասե իրերը և այլ նմանատիպ առարկանները/միանվագ գործածված ներարկիչներ, ներարկման բժշկական սրածայր այլ համակարգեր/ առանձնացվելու են մետաղական արկղերի մեջ և պահվելու են պահեստում՝ մինչև այրումը: Պահեստում պահվող ժամանակավոր թափոնների առավելագույն քանակը կարող է կազմել՝ 4-6տ: Սառնարանային պահեստում թափոնները պահվում են ամառը մինչև 48 ժամ, ձմռանը՝ 72 ժամ:

Թափոնները տեղափոխվում են 2տ տարողության մեքենաներով, առավելագույնը՝ օրական 2 երթով: Ժամանակավոր պահեստավորվող թափոնների քանակը կազմում է 4-6 տ:

Վառարանի բեռնումը կարելի է կրկնել յուրաքանչյուր 40 րոպեն մեկ: Հաշվի առնելով տեխնոլոգիական ցուցանիշների կայունության կարևորությունը և վառարանն արտադրող ընկերության խորհուրդը, ընկերությունը հավաքում է թափոնների որոշակի քանակ՝ մինչև սպառվեն կուտակված թափոնները:

Համալիրի ժամային արտադրողականությունը կազմում է 100 կգ, մեկ բեռնումը՝ 100կգ, վնասագերծման մեկ ցիկլը՝ 40 րոպե: Օրական առավելագույն արտադրողականությունը՝ 2.400 կգ: Բեռնման–բեռնաթափման, մաքրման գործընթացը տևելու է մոտ 20 րոպե:

Համալիրը աշխատում է 11 ամիս, ընդամենը՝ 7920 ժամ/տարի: 1 ամիս կպահանջվի համալիրի ընթացիկ վերանորոգման համար:

Լիարժեք ծանրաբեռնվածության (պատվերների առկայության) տարեկան առավելագույն արտադրողականությունը կկազմի՝ 792տ/տարի:

Վերազինման արդյունքում ընկերությունը նախատեսում է հավաքել արտադրական, կենդանական, օրգանական և քիմիական թափոններ: Արտադրական թափոնները տարածք կբերվեն ընկերության սեփական կամ այլ անձանց միջոցներով, որոնք կունենան համապատասխան լիցենզիա նմանատիպ թափոններ տեղափոխելու համար: Ըներությունը թափոններն ընդունելու է հանձնող կազմակերպության կամ անհատների կողմից թափոնների կազմի և բնութագրի վերաբերյալ համապատասխան պիտակի առկայության դեպքում: Նախատեսվում է 1 ամսվա ընթացքում հավաքել 14-16տ, տարեկան՝ 154-176տ թափոն: Արտադրական և քիմիական թափոնների տեղափոխումը կատարվելու է 7-8տ տարողության փակ թափքով, կամազ(1) տիպի մեքենայի միջոցով՝ ամիսը 2 անգամ: Արտադրության տարածքում համապատասխան մասնագետի կողմից/տեխնոլոգ/ թափոնները կտեսակավորվեն ըստ վտանգավորության դասի և կտեղադրվեն համապատասխան տարանների մեջ: Քիմիական և արտադրական թափոնների պահեստավորման համար տարածքում՝ 60մ<sup>2</sup> մակերեսի, վառարանից 15մ հեռավորության վրա կտեղադրվեն յուրաքանչյուրը 20տ տարողության 2 մետաղյա, հերմետիկ փակվող կոնտեյներ: Տեղադրվելու են նաև փայտյա 2 հատ 15տ տարողության կոնտեյներներ(տարողություններ), որոնց մեջ պահեստավորվելու են կոշտ կենցաղային թափոնները (ժամկետանց սննդամթերք, հեղուկներ և այլն): Միանվագ գործածված ներարկիչները, ներարկման և այլ սրածայր համակարգերը (գործիքները) ևս կտեղադրվեն մետաղյա տարողությունների մեջ:

Կոնտեյներներին կից, 1մ<sup>2</sup> տարածքի և այրման կայանի շինությունից մոտ 15մ հեռավորության վրա՝ ծածկի տակ, տեղադրված է 1x1x2մ չափերի մեխանիկական մամլիչ, որի օգնությամբ թափոնները սեղմվում են, չափերով փոքրացվում և նոր բեռնվում վառարան: Մամլիչի առավելագույն տարողությունը 50կգ է: Մեկ փուլի մամլման գործընթացը տևում է 10-15 րոպե՝ կախված թափոնի տեսակից և քանակից: Մամլիչը մաքրվում է չոր եղանակով՝ լաթերով, որոնք հետո այրվում են վառարանում:



Թափոնները՝ կոնտեյներից մինչև վառարան տեղափոխվելու են սայլաքարշակների օգնությամբ և անմիջապես բեռնվում են վառարան: Թափոնների բեռնումը կատարվում է վառարանի անփոխարինելի մաս հանդիսացող 500կգ տարողության վերելակի միջոցով: Թափոնների բեռնումը վառարան կատարվում է վառարանի դռնակով՝ ձեռքով:

## 12.2 Թափոնների կազմը

Վերազինման արդյունքում հզորությունների ավելացում չի լինելու, քանի որ վառարան բեռնվող թափոնների քանակը մնալու է նույնը: Փոխվելու է այրման ենթակա թափոնների հարաբերակցությունը.

- 90%՝ բժշկական թափոններ,
- 10%-ը՝ այլ արտադրական թափոններ կամ այլ թափոններ:

## 12.3 Գործունեության իրականացման հետևանքով առաջացող այլ թափոններ

Գործունեության իրականացումն արդյունքում առաջանալու են հետևյալ վտանգավոր թափոնները.

- օգտագործված յուղեր՝ առաջանում են կոմպրեսորների յուղի փոխման արդյունքում, (ծածկագիր՝ 54100211 02 03 3),
- աղտոտված ֆիլտրեր՝ առաջանում են ֆիլտրերի փոխելու արդյունքում,
- սարքավորումների մասերի մաքրման, թափոնների հետ աշխատելու արդյունքում առաջացող յուղոտված լաթեր, (58200600 01 01 4),
- այրման արդյունքում առաջացած փոշու կոշտ մասնիկներ՝ մոխրի տեսքով, (3130180001013),
- կենցաղային աղբ (91200400 01 00 4):

Այս կարգի թափոնները համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 3-4 դասերին:

Կոմպրեսորներում օգտագործված յուղը, ֆիլտրերը, յուղոտված լաթերն այրվելու են վառարանում:

Կենսաօրգանական և այլ օրգանական թափոնների ջերմային վնասազերծման ընթացքում կառաջանան այրման մնացորդներ (մոխիր): Ըստ նույնանման համալիրների տվյալների այրման մնացորդների քանակը կարող է կազմել թափոնների ընդհանուր քանակի 2 - 5 տոկոսը:

Մնացորդային մոխիրը հեռացվելու է մեխանիկական եղանակով: Վառարանի այրման ավարտից հետո բացվող դռնակից մոխիրը լցվում է բետոնապատ մակերեսի վրա դրված համապատասխան տարրայի մեջ, այնուհետև դատարկվում 200 կգ տարողության 5 մետաղական, հերմետիկ փակվող արկղերի մեջ: Բետոնապատ մակերեսին թափված մոխրի մնացորդները հավաքում են խոզանակի օգնությամբ: Շաբաթական երկու-երեք անգամ մետաղական արկղերի պարունակությունը սանիտարական ծառայության մեքենաներով՝ համապատասխան պայմանագրի հիման վրա, տեղափոխվում է աղբավայր: Դատարկ վիճակում արկղերը վերադարձվում են ընկերության պահեստ: Արկղերը բազմակի օգտագործման են և չունեն ծառայման ժամկետի սահմանափակում: Աղբավայր է տեղափոխվում նաև 7.560կգ/տարի կենցաղային աղբը:

1 մարդու հաշվով կենցաղային աղբի տարեկան ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.



$$M = N \times m$$

որտեղ,

$N$  – աշխատողների թվաքանակն է,

$m$  – 1 մարդու հաշվով կենցաղային աղբի ընդունված ծավալն է՝ 360կգ:

Այսպիսով,

$$M = 21 \times 360 = 7.560 \text{ կգ}$$

Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտություն է առաջանալու կայանքը վերանորոգել: Փոխված և նորոգման ենթակա որոշ մասերը(պոմպ, խողովակ, գազի այրման այրիչ, զոնդ և այլն)ուղարկվելու են գերմանական կազմակերպություն՝ վերանորոգելու նպատակով: Իսկ երկաթյա մասերը (տարեկան 20կգ), որոնք ենթակա չեն վերանորոգման՝ հանձնվում են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին: Վերջիններիս են հանձնվում նաև ընդունված թափոնների տեսակավորումից առաջացած և նախապես մեխանիկական մշակման ենթարկված մետաղական մասերը (բժշկական նշտարներ, սրածայր ասեղներ, դանակներ և այլն):

#### **12.4 Կեղտաջրերի հեռացում**

Նախատեսվող գործունեության տարածքում առկա է 3-5 տ տարողության 2 սեպտիկ հորեր և կոյուղաջրերի հեռացման ներքին համակարգ, որի միջոցով հեռացվում են աշխատողների կոմունալ-կենցաղային կարիքները հոգալուց և տարածքի մաքրման աշխատանքներից առաջացած հոսքաջրերը:

Սեպտիկ հորերի մաքրումը կատարվում է ասսենիզացիոն մեթոդով(կեղտաջրերի հեռացման եղանակ), ըստ անհրաժեշտության (2-3 ամիսը 1 անգամ)՝ լիցենզիա ունեցող համապատասխան անձի կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը չի կնքվում երկարատև ժամկետով, այլ կնքվում է ամեն անգամ՝ համապատասխան աշխատանքները կատարելու պահին:

Անձրևաջրերը ներքին բակային ցանցով լցվում են գոյություն ունեցող հորերը, որը հետագայում օգտագործվում է կանաչապատ տարածքի ոռոգման համար:

Արտադրական տարածքում տաք ջրամատակարարումը և ջեռուցումը կատարվում է էլեկտրական սարքերի միջոցով:

Արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգությունն ապահովելու նպատակով տարածքում տեղադրվել են 20 հատ կրակամարիչներ և հակահրդեհային վահանակ:

#### **12.5 Բնառեսուրսներ.**

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվում են բնառեսուրսներ՝ ջուր և բնական գազ: Այրման գործընթացի իրականացման համար փաստացի օգտագործվող գազի քանակը կազմում է տարեկան 31591,1հազ. մ<sup>3</sup>:

Վերազինման արդյունքում բնառեսուրսների և նյութերի լրացուցիչ օգտագործում չի նախատեսվում:

**Ջրային ռեսուրսներ.** այրման վառարանի տեխնոլոգիական գործընթացում ջուր չի օգտագործվում: Վարանի հովացման նպատակով օգտագործվում 400 հակասառեցուցիչ(անտիֆրիզ)՝ փակ շրջանառու համակարգով:

Ընկերության աշխատողների համար խմելու ջուրը բերվում է պատրաստի վիճակում՝ ըստ պահանջի, ապահովված է խմելու ջրի ապարատով:

Ընկերության աշխատողների կենցաղային կարիքների՝ ցնցուղարանի, լվացվելու, տարածքի մաքրման աշխատանքների, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումների համար ջուրը վերցվում է գոյություն ունեցող հորից՝ պոմպի միջոցով: Աշխատողների համար նախատեսված է 1 ցնցուղարան, լվացարան: Համաձայն՝ ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից 2017թ. մարտի 10-ին ընկերությանը տրված ջրօգտագործման թույլտվության՝ հորից վերցվող ջրի քանակը 4 ժամյա ռեժիմով՝ 180 օրվա համար կազմել է 0,411 հազ.մ<sup>3</sup>/տարի կամ 2,288մ<sup>3</sup>/օր:

Վերազինման արդյունքում ջրապահանջի հաշվարկը հետևյալն է.

1 ցնցուղարանի օգտագործվող ջրի նորմն ընդունված է 0,14լ/վրկ. (բանաձևը կազմվել է ՄՆԻՊ 2.04.03-85. տվյալների հիման վրա )

$$Nc2=Ncm \times 0.14\text{լ/վրկ} \times Nm \times M,$$

Որտեղ,

Ncm – ցնցուղարանի թիվն է,

Nm – աշխատողների թիվն է,

M – մեկ աշխատողի ցնցուղարանում գտնվելու ժամանակն է (5 րոպե)

$$Nc2=1 \times 0.14\text{լ/վրկ} \times 21 \times 5\text{րոպե}$$

5րոպե=300վայրկյան, հետևաբար.  $1 \times 0.14\text{լ/վրկ} \times 300 = 42\text{լ/ջուր}$  կօգտագործվի մեկ մարդու կողմից, իսկ ընդհանուրը կկազմի՝

$$42 \times 21=882\text{լ/օր}=0,882\text{մ}^3/\text{օր}$$

Այսպիսով, 1 ցնցուղարանը 21 մարդու հաշվով կարող է ծախսել 0.882մ<sup>3</sup> /օր ջուր:

Սույն հայտի շրջանակներում նախատեսվում է համալիրի վերազինում «Լյամբդա-տվիչով LT1»-ով, ինչը հնարավորություն կստեղծի վառարանում այրման ջերմաստիճանի բարձրացման միջոցով ապահովել վառարանի այրման գործընթացի արդյունավետությունը, կարգավորել օդային ավազան արտանետումները: Վերազինման արդյունքում օդային ավազան լրացուցիչ արտանետումներ չեն նախատեսվում:

**Հողային ռեսուրսներ.** գործարանի վերազինումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող արտադրամասի տարածքում, որը երկար տարիներ գտնվում է մարդածին ազդեցության գոտում: Վերազինման ընթացքում նոր տարածքներ չեն օտարվելու և նոր հողային ռեսուրսների խախտում կամ աղտոտում չի կատարվելու:

## **13. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը**

### **13.1 Օդային ավազան**

Օդային ավազանի վրա հնարավոր ազդեցությունները մեղմացնելու նպատակով նախատեսվում է.

- օդային ավազանի մոնիթորինգ՝ պինդ մասնիկների, ծծմբային անհիդրիդի, քլորաջրածնի, ածխածնի և ազոտի օքսիդների, գերնորմատիվային արտանետումները կանխելու նպատակով,

- ապահովվելու է կայանքի այրման ռեժիմի, ջերմաստիճանի, երկաստիճան այրման համակարգի անխափան աշխատանքը,

- անսարքության ժամանակ անմիջապես անջատվելու է սարքավորումը, դադարեցվում բեռնումը,

- սարքի սպասարկումը և շահագործումն իրականացվելու է միայն մասնագիտական պատրաստվածություն անցած մասնագետների կողմից,

- պարբերաբար իրականացվելու է կայանքի ստուգում, բացառելով վերջինիս անսարք վիճակում աշխատելը,

- ապահովվելու են թափոնների անվտանգ բեռնումը, մինչև հաջորդ բեռնումը ստուգվելու են դոնակի(շյուր) ֆունկցիաները:

### **13.2 Հողային ռեսուրսներ**

- վառարանի տեղադրման վայրը բետոնապատվել է՝ հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի ներթափանցումը կանխելու համար,

- արտադրական տարածքը բարեկարգված և ասֆալտապատված է,

- թափոնները կուտակվում են հատուկ կոնտեյնների մեջ, որտեղից բացառվելու է արտահոսքը դեպի հողային ռեսուրսներ,

- մթնոլորտային տեղումների ժամանակ կբացառվեն բեռնաթափման կամ բեռնման, պահեստավորման աշխատանքները՝ հողային ռեսուրսների մեջ վտանգավոր թափոնների արտահոսքը կանխելու համար,

- թափոնների մանրացման համար ջարդիչ կայանը տեղադրված է ծածկի տակ, պահվում է փակ վիճակում:

### **13.3 Ջրային ռեսուրսներ**

- մթնոլորտային տեղումների ժամանակ բացառվում են բեռնաթափման կամ բեռնման, պահեստավորման աշխատանքները՝ անջրնաջրերի հետ վտանգավոր թափոնների խառնվելու և ջրային ռեսուրսների մեջ դրանց արտահոսքը կանխելու համար,

- վառարանից մնացորդային մոխրի հեռացումը, վառարանի մասերի մաքրումը կատարվում է չոր եղանակով, առանց ջրի օգտագործման:

#### **13.4 Թափոններ**

- արտադրական, քիմիական և այլ թափոններն ընկերության տարածք են տեղափոխվում փակ թափքով մեքենաներով՝ ծածկված վիճակում,

- բժշկական թափոնները ընկերության տարածք են բերվելու սառնարանային տիպի հատուկ մեքենաներով և պահվելու են հովացման համակարգով ապահովված սառնարանային պահեստում՝ նախօրոք տեսակավորմանը համապատասխան տարրաներում,

- վտանգավոր թափոնները պահվում են առանձնացված սենյակում, նախօրոք տարանջատելով ըստ թափոնատեսակի,

- օրգանական և արտադրական թափոնները տարանջատվում են թափոնների հարաբերակցությունը ճիշտ պահելու համար,

- բացառվելու են հալոգեն պարունակող թափոնների ընդունումը և այրումը,

- կոնտեյներներից թափոնների տեղափոխումը վառարան կատարվում են ծածկված վիճակում,

- վտանգավոր թափոնների պահպանումը կատարվելու է 2009թ. հոկտեմբերի 29-ի ՀՀ Առողջապահության նախարարի N 20-Ն հրամանի պահանջներին համաձայն՝

- I-ին դասի արտադրական պինդ թափոնների(բացի սնդիկ պարունակող նյութերից) պահպանվելու են կոնտեյներներում,

- II-րդ դասի արտադրական պինդ թափոնները պահպանվելու են կոնտեյներում կամ փակված տարայում՝ պոլիէթիլենային պարկերում,

- III-րդ դասի արտադրական պինդ թափոնները պահպանվելու են թղթյա, բամբակյա, մանվածքային պարկերում, IV-րդ դասինը՝ կուտակումների տեսքով,

- կոմպրեսորների փոխված յուղերը և օգտագործված լաթերն այրվելու է վառարանում,

- գազի այրման ընթացքում սարքի օգտագործված և փոխված ֆիլտրները այրվելու են վառարանում:

#### **13.5 Աղմուկ և թրթռում.**

- կայանքը պարբերաբար ենթարկվելու ստուգման՝ աշխատելու ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակի նվազեցման նպատակով ,

- անսարք մասերը հաճախակի փոխվելու են, բացառվելու է վառարանի անսարք վիճակում աշխատելը:

#### **13.6 Աշխատանքի կազմակերպման ապահովում .**

- անցկացվելու են համապատասխան մասնագիտական դասընթացներ՝ գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և աշխատողների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով,

- ստուգվելու են աշխատողների վտանգավոր նյութերի հետ աշխատելու, ինչպես նաև մասնագիտական պատրաստվածությունը,

- աշխատողների համար համապատասխան սանիտարական պայմաններն ապահովված են(ցնուղարան, լվացարան, զուգարան, հանգստի սենյակ),
- աշխատավայրում կան առաջին բուժօգնության դեղարկղիկներ՝ աշխատողներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար,
- վառարանի աշխատանքի վերաբերյալ վարելու են գրանցամատյան:

### **13. 7 Աշխատանքի անվտանգություն**

- պահպանվելու են 2008 թ. մարտի 4-ի՝ «ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 03-Ն հրամանի պահանջները,

- կայանքի աշխատանքների ընթացքում անձնակազմը պահպանելու է առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները,

- վտանգավոր քիմիական թափոնները ժամանակավոր կուտակվելու են հատուկ հատկացված տեղերում, տեսակավորվելու են, ելնելով վերջիններիս հրդեհապայթունավտանգությունից,

- վտանգավոր թափոնները պահվելու են հերմետիկ տարաներում և փակ սենքերում, բացառելով կողմնակի մարդկանց մուտքը,

- տեղադրված են հակահրդեհային հիդրատներ, կրակմարիչներ, հակահրդեհային վահանակներ, ինչպես նաև անվտանգության ապահովման այլ ազդանշանային սարքեր և վահանակներ,

- քամու, մթնոլորտային տեղումների ժամանակ աշխատանքների վերահսկողությունն ուժեղացվում է, անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքը դադարեցվում է, բոլոր տեսակի սնուցման աղբյուրներն անջատվում են,

- աշխատակիցներին ապահովվելու են հատուկ, անհատական պաշտպանական միջոցներով (դիմակներ, ձեռնոցներ, համապատասխան արտահագուստ, գլխարկ պաշտպանիչ ակնոցներ, կոշիկներ):

**14. Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական կառավարման միջոցառումների նախագիծ**

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	<b>Օդային ավազան</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Ապահովելու է կայանքի այրման ռեժիմը և ջերմաստիճանը,</li> <li>- ապահովելու է երկաստիճան այրման համակարգի անխափան աշխատանքը,</li> <li>- անսարքության ժամանակ անջատվելու է սարքավորումը, դադարեցվելու է վառարանի բեռնումը,</li> <li>- սարքի սպասարկումը և շահագործումն իրականացվելու է միայն մասնագիտական պատրաստվածություն անցած մասնագետների կողմից,</li> <li>- ապահովելու է թափոնների անվտանգ բեռնումը, մինչև հաջորդ բեռնումը՝ դռնակի և սարքավորման ֆունկցիաները, ստուգվելու,</li> </ul>	«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ	

		<ul style="list-style-type: none"> <li>- պարբերաբար կայանքը ստուգվելու է, վերջինիս անսարք վիճակում շահագործումը՝ բացառվում,</li> <li>- օդային ավազանի մոնիթորինգ:</li> </ul>		«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ տեսչություն
2	<b>Հողային ռեսուրսներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>- Մթնոլորտային տեղումների ժամանակ բեռնաթափման կամ բեռնման, պահեստավորման աշխատանքները դադարեցվելու են՝ հողային ռեսուրսների մեջ վտանգավոր թափոնների արտահոսքը կանխելու համար,</li> <li>- թափոնները կուտակվելու են հատուկ կոնտեյներների մեջ, որտեղից բացառվելու է թունավոր նյութերի արտահոսքը դեպի հողային ռեսուրսներ,</li> <li>- թափոնների մանրացման ջարդիչ կայանը պահվելու է փակ վիճակում՝ ծածկի տակ:</li> </ul>	«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ	

3	<b>Ջրային ռեսուրսներ</b>	<p>-մթնոլորտային տեղումների ժամանակ բացառվելու են բեռնաթափման կամ բեռնման, պահեստավորման աշխատանքները՝ անձրևաջրերի հետ վտանգավոր թափոնների խառնվելու և ջրային ռեսուրսների մեջ դրանց արտահոսքը կանխելու համար,</p> <p>-վառարանից մնացորդային մոխրի հեռացումը, ինչպես նաև վառարանի, այլ մասերի մաքրումը կատարվելու են չոր եղանակով, առանց ջրի օգտագործման:</p>	«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ	
4	<b>Թափոններ</b>	<p>-Արտադրական, քիմիական և այլ թափոնները ընկերության տարածք են տեղափոխվելու փակ թափքով մեքենաներով՝ ծածկված վիճակում,</p> <p>-վտանգավոր թափոնները պահվելու են առանձնացված սենյակում, վարակիչ թափոնները՝ սառնարանում,</p> <p>- օրգանական և արտադրական թափոնները տարանջատվելու են՝ թափոնների հարաբերակցությունը պահելու համար,</p> <p>-կոնտեյներներից թափոնների տեղափոխումը վառարան կատարվելու է ծածկված վիճակում,</p>	«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ	



		<p>-I-ին դասի (բացի սնդիկ պարունակող նյութերից) արտադրական պինդ թափոնները պահպանվելու են կոնտեյներներում,</p> <p>-II-րդ դասի արտադրական պինդ թափոնները պահպանվելու են կոնտեյներում կամ փակված տարայում՝ պոլիէթիլենային պարկերում,</p> <p>-II-րդ դասի արտադրական պինդ թափոնների պահպանվելու են կոնտեյներում կամ փակված տարայում՝ պոլիէթիլենային պարկերում,</p> <p>- III-րդ դասի արտադրական պինդ թափոնների պահպանվելու են թղթյա, բամբակյա, մանվածքային պարկերում, IV-րդ դասինը՝ կուտակումների տեսքով,</p> <p>-կոմպրեսորների փոխված յուղերի և օգտագործված լաթերը այրվելու են վառարանում,</p> <p>- սարքի գազի այրման ընթացքում օգտագործված և փոխված ֆիլտրներն այրվելու են վառարանում,</p> <p>-մնացորդային մոխրի այրում վառարանում՝ 1200°C ջերմաստիճանում:</p>		<p>Տեսչական ստուգումներ</p>
--	--	---	--	-----------------------------

5	Աղմուկ և թրթռում	<p>-Կայանքը պարբերաբար ենթարկվելու ստուգման՝ աշխատելու ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակի նվազեցման նպատակով,</p> <p>-անսարք մասերի հաճախակի փոխվելու են, բացառվելու է վառարանի անսարք վիճակում աշխատելը,</p> <p>- անցկացվելու են համապատասխան մասնագիտական դասընթացներ՝ գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և աշխատողների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով,</p> <p>- ստուգվելու է աշխատողների վտանգավոր նյութերի հետ աշխատելու՝ մասնագիտական պատրաստվածությունը,</p>	«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ	
6	Աշխատանքի կազմակերպման ապահովում	<p>- ապահովված են լինելու աշխատողների համար համապատասխան սանիտարական պայմանները (ցնուղարան, լվացարան, գուգարան, հանգստի սենյակ),</p> <p>-վառարանի աշխատանքի վերաբերյալ վարվելու է գրանցամատյան, որտեղ նշվելու է այրման գործընթացի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը,</p>		

7	<p><b>Աշխատանքի անվտանգություն</b></p>	<p>-վտանգավոր քիմիական թափոնները ժամանակավոր կուտակվելու են հատուկ հատկացված տեղերում, տեսակավորվելու են, ելնելով վերջիններիս հրդեհապայթունանվտանգությունից,</p> <p>-վտանգավոր թափոնները պահվելու են հերմետիկ տարաներում և փակ սենքերում, բացառելով կողմնակի մարդկանց մուտքը,</p> <p>- տեղադրված են հակահրդեհային հիդրատներ, կրակմարիչներ, հակահրդեհային վահանակներ, ինչպես նաև անվտանգության ապահովման այլ ազդանշանային սարքեր և վահանակներ,</p> <p>-արտակարգ իրավիճակների (քամի, մթնոլորտային տեղումներ և այլն) դեպքում աշխատանքների վերահսկողությունն ուժեղացվում է, անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքը դադարեցվում է, բոլոր տեսակի սնուցման աղբյուրներն անջատվում են,</p> <p>-աշխատակիցներն ապահովվելու են հատուկ, անհատական պաշտպանական միջոցներով (դիմակներ, ձեռնոցներ, համապատասխան</p>	<p>«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ</p>	
---	--	--	-----------------------------	--

		<p>արտահագուստ, գլխարկ պաշտպանիչ ակնոցներ, կոշիկներ),</p> <p>-աշխատավայրում լինելու են առաջին բուժօգնության դեղարկղիկներ՝ աշխատողներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար:</p>		
--	--	--	--	--


## Օգտագործված գրականություն

1. СП 31.13330.2012 ՄՆԻՊ 2.04.02-84\* Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ:
2. ՀՀ բնապահպանության նախարարի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրաման:
3. 2009թ. հոկտեմբերի 29-ի ՀՀ Առողջապահության նախարարի N20-Ն հրաման՝ վտանգավոր քիմիական թափոնների գործածությանը և վտանգավոր քիմիական նյութերի պահպանմանը և փոխադրմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.001-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին:
4. СН 245 – 71. Санитарные нормы проектирования промышленных предприятий:
5. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014թ. հոկտեմբերի 14-ի N 263-Ն հրաման՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի n 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» :
6. ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքային համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիր:
7. Էջմիածին քաղաքի լրացուցիչ ջրամատակարարման բաշխիչ համակարգերի վերակառուցման շրջակա միջավայրի կառավարման և մոնիթորինգի ծրագիր ( 2014թ.):
8. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրաման:



ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

(մասշտաբը)  
1:500



ՀԱՏԵԿԱԾԸ	ԵՐԳԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՒ	ԱԱՀՄԱՆԱԿՈՒՄ ԱՓՈՒՆ ԱՋԳԱՆՈՒՅՐ
1-2	22.9	
2-3	38.7	
3-4	34.9	ԺԱՆԱԳԱՆ
4-5	14.7	« ԳՈՒԵԿ ԱԼԻԿՈՒ ՄՁԳ
5-6	51.0	« ԳՈՒԵԿ ԱԼԻԿՈՒ ՄՁԳ
6-1	27.5	

ԹԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԱՐ	ԹԻՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆ
1	ԱՐՏԱԳՐԱՄԱՍ
2	ՊԱՀԱԳԱՏՈՒՄ
3	ՊԱՐԻԿ

Կատարող Դավիթ ՄԱՍԻՍՅԱՆ  
(ստորագրություն)

Պատկեր N 1  
ՀՀ Կառավարության 2003 թվականի  
մարտի 7-ի N 218-Ն որոշմամբ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԴԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 000036

3-4-Ձ-Ս-Ն

**«ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Գ.» ՍՊԸ**

(Զրոգտագործողի անվանումը)

**ՀՀ ԲՆԱԴԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ**

(Ջրային ռեսուրսների կառավարման և

**ՆԱԽԱՐԱՐ Ա. ՄԻՆԱՍՅԱՆ**

պահպանության մարմնի ղեկավար)

ստորագրությունը, անունը, ազգանունը

**«ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Գ.» ՍՊԸ**

(Ջրօգտագործման թույլտվություն ստացողի

**ՏՆՕՐԵՆ Խ. ՄՈՂՐՈՎՅԱՆ**

անունը, ազգանունը)

պաշտոնը, ստորագրությունը

Կ.Տ

Տրված է 10 03 2014 թ.

Ուժի մեջ է մինչև 10 03 2010 թ.

Գործունեության ժամկետը երկարաձգված է մինչև

20 թ.

(Ջրային ռեսուրսների կառավարման և

պահպանության մարմնի ղեկավար)

(Ջրօգտագործման թույլտվություն ստացողի

պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը)



1. Ջրօգտագործողի հասցեն \_\_\_\_\_

(ջրօգտագործման բույլտվություն ստացողի անվանումը, (անունը,

ՀՀ ք. Էջմիածին, Վ. Կոստանյան փ., 8գ. հեռ. (077) 66 90 80

ազգանուն) հասցեն և հեռախոսը)

2. Ջրօգտագործման վայրը \_\_\_\_\_

ՀՀ Արմավիրի մարզ

Էջմիածին քաղաքի վարչական տարածք

3. Ջրառի վայրը \_\_\_\_\_

ՀՀ Արմավիրի մարզ

Էջմիածին քաղաքի վարչական տարածք

4. Ջրօգտագործման նպատակը /գյուղատնտեսական/ Լողոզում՝ 0.0208 հա/

5. Ջրօգտագործման ծավալը, այդ թվում՝

ա) մակերևութային ջրային ռեսուրսներ \_\_\_\_\_

բ) ստորերկրյա ջրային ռեսուրսներ \_\_\_\_\_

Սեկ գործող խորքային հոր

0.411 հազ. մ<sup>3</sup>/տարի, 2.288 մ<sup>3</sup>/օր, 0.16 լ/վրկ

6. Ջրօգտագործման ժամանակահատվածը և ռեժիմը \_\_\_\_\_

Տառեկան 180 օր 4 ժամյա ռեժիմով

7. Ջրօգտագործման բույլտվության պայմանների ապահովման նկատմամբ վերահսկողության մեխանիզմները \_\_\_\_\_

1. Ջրօգտագործման չափաքանակի վերահսկողություն և հաշվառում:

2. Ջրօգտագործման նպատակայնություն:

3. Սույն ՋԹ-ի անբաժանելի մաս հանդիսացող սպայմանների կատարում:

\* Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով սահմանված դեպքերում ստորերկրյա ջրերի օգտագործման համար պահանջվում է նաև ընդերքօգտագործման պայմանագիր:

N 000036 10.03.2017թ.

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ  
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 32-ի պահանջների համաձայն մշակված սույն պայմանները ենթակա են պարտադիր կատարման: Սույն պայմանների խախտումը, համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 30.2 հոդվածի, հիմք է ջրօգտագործման թույլտվության կասեցման համար:

1. «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ն պարտավոր է՝

ա/ ապահովել՝ N 000036 ջրօգտագործման թույլտվության ստացմամբ և ջրօգտագործման իրականացմամբ պայմանավորված ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը.

բ/ իր գործունեությամբ չնվազեցնել՝ մինչև N 000036 ջրօգտագործման թույլտվության ստացումը գոյություն ունեցող ավանդական ջրօգտագործողների ջրօգտագործման իրավունքները.

գ/ ապահովել պայմաններ՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակցի կողմից ջրօգտագործման թույլտվության պայմանների կատարումը հսկելու համար.

դ/ տարբեր պատճառներով ջրօգտագործման դադարեցման (ծավալների նվազեցման) հետևանքով խորքային հորի չշահագործման դեպքում ՀՀ բնապահպանության նախարարության կողմից սահմանված ձևով և ժամկետում պահուստավորել, կոնսերվացնել (կախված հորի շահագործական և տեխնիկական վիճակից) այն:

2. Ապահովել ՀՀ կառավարության 14.01.10թ. «Արդիական տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիտորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումները սահմանելու մասին» N 118-Ն որոշման պահանջները.

ա/ 6 ամսվա ժամկետում ջրառի կետում սահմանված կարգով տեղադրել ջրաչափական դիտակետեր, ջրօգտագործման հաշվառման սարքեր կամ համապատասխան սարքավորումներ, այդ մասին տեղեկացնելով ՀՀ բնապահպանության նախարարությանը

բ/ կատարել ջրօգտագործման, ջրահեռացման և ջրային ռեսուրսների աղտոտման հաշվառման աշխատանքներ և կատարված աշխատանքների մասին տարեկան հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:



3. Ջրավազանային կառավարման պլանների ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո նախկինում տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների ջրօգտագործման պայմանները կարող են վերանայվել:



4. Հայաստանի Հանրապետությունը և ջրային ռեսուրսների կառավարման ու պահպանության մարմինը Սույն ջրօգտագործման թույլտվությունն ուժի մեջ մտնելուց հետո պատասխանատվություն չեն կրում ջրային ռեսուրսների նվազման հետևանքով ջրօգտագործողի կրած վնասների համար և չեն հատուցում դրանք:

5. Սեկ գործող խորքային հորի կոորդինատական կետն է.

X = 44° 16' 43.8" Y = 40° 06' 30.9" H = 840.0մ

ՀՀ բնապահպանության նախարար

  
Ա. Մինասյան  
  
«10» 03 2017 թ.

«Էկոլոգիա Վ. Կ. Հ.» ՍՊԸ-ի  
տնօրեն  
  
Խ. Մողրովյան  
  
«10» 03 2017 թ.

8. Ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թուլատրելի ծավալները \_\_\_\_\_

չ

9. Արտահոսքի նկարագրությունը \_\_\_\_\_

չ

10. Կեղտաջրերում վնասակար նյութերի թուլատրելի սահմանային արտահոսքի տվյալները \_\_\_\_\_

չ

11. Ջրերի ստանդարտները և(կամ) դրանց վերաբերյալ հրապարակումների տեղեկությունները \_\_\_\_\_

չ

12. Հատուկ միջոցառումներ, որոնք կիրառվելու են արդյունավետ ջրօգտագործումը խթանելու և ջրի որակը բարելավելու, գերիտոնավ և առափնյա կարևոր բնական միջավայրերը և առնչվող կենսաբազմազանությունը պահպանելու համար \_\_\_\_\_

Մշակել և իրականացնել ջրակորուստների կրճատման

և նորմատիվային ջրաքանակի արդյունավետ օգտագործման

միջոցառումների ծրագիր:

13. Համապատասխան պահանջներ՝ ջրօգտագործման հաշվառման, մոնիտորինգի, գրանցման և ճշգրտման համար \_\_\_\_\_

1. Ջրառի կետն ապահովել ջրաչափական դիտակետով,  
ջրաչափով և սահմանված կարգով այն կապարակնքել:

2. Կատարել ջրօգտագործման հաշվառման աշխատանքներ և  
սահմանված կարգով ՀՀ բնապահպանության նախարարություն  
ներկայացնել 2-տա(ջրտնտ) տարեկան հաշվետվությունը:

14. Համապատասխան երաշխիքներ՝ ջրային ռեսուրսների վնասներ հասցվելու դեպքում \_\_\_\_\_

ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների խախտման դեպքում փոխհատու-  
ցել հասցված վնասը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Ջրօգտագործման թույլտվությանն առնչվող վճարներն ու վճարման ժամանակացույցը. \_\_\_\_\_

1. Պետական տուրքի անդորրագիր N 140310015289014

2. Բնօգտագործման և բնապահպանական վճարների վճարել

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին»,

«Բնապահպանական վճարների դրույթաչափերի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի

Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի

30-ի N864 որոշմամբ սահմանված կարգով, չափով

և ժամկետներով:

16. Ջրօգտագործման թույլտվությունը գրանցված է պետական ջրային կադաստրում:

Սույն ջրօգտագործման թույլտվությունը կազմված է երկու շրջանակից:

17. Խորքային հորի հորատմանը ներկայացվող պահանջները \_\_\_\_\_



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

№ 1/10.1.8/10550

« 30 » « 09 » 202 թ.

«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ-ի տնօրեն  
պարոն Խ.Մողրովյանին

Հարգելի պարոն Մողրովյան

Ուսումնասիրելով Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում գյուղատնտեսական /ոռոգում 0,0208 հա/ նպատակով տրված №000036 ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման Ձեր 2020 թվականի օգոստոսի 25-ի № 25/08-2020-1 դիմումը, հայտնում եմ.

համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 33-րդ հոդվածի վերջին պարբերության, 78-րդ հոդվածի և հիմք ընդունելով պետական տուրքի № 200917081307017 վճարման հանձնարարագիրը՝ Ձեր № 000036 ջրօգտագործման թույլտվությունը համարվում է երկարաձգված նույն պայմաններով՝ մինչև 2023 թվականի մարտի 10-ը գործողության ժամկետով:

Հարգանքով՝



Ռ. Պետրոսյան

Լիցենզիաների, թույլտվությունների և  
համաձայնեցումների վարչության ՋԲԾ բաժին  
Ա. Գրիգորյան 011-818-541



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3  
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am  
հեռ. +374 11 818 501 | ֆաքս՝ +374 11 818 506



« ՀԱՅԿՈՒՊԱՏՆԵՍՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ »

« ԱԳՐՈՔԻՄԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ »

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



МИНИСТЕРСТВО СЕЛЬСКОГО  
ХОЗЯЙСТВА РА

“ АГРОХИМИЧЕСКАЯ СЛУЖБА ”

ГОСУДАРСТВЕННАЯ НЕ КОММЕРЧЕСКАЯ  
ОРГАНИЗАЦИЯ

0004, ք. Երևան, Ծով. Իսախանյան պողոտա - 22՞  
Հեռ. (010) 77 - 29 - 06  
e - mail: agrocarayutyun@mail.ru

0004, г. Ереван, проспект Адм. Иссакова - 22՞  
тел. (010) 77 - 29 - 06  
e - mail: agrocarayutyun@mail.ru

06.03.2012 թ. N. 01/09

N

Ձեր

Ваш

« Էկոլոգիա Վ.Կ.Հ » ՍՊԸ  
պրն. Բ. ՍԵՂՈՎԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 25.10.2011 թ. N 33Ա նամակի

Ձեր կողմից ներկայացված մոխրի մեկ մմուշում փորձաքննությունները կատարվել են որպես օրգանական պարարտանյութ՝ 26712 - 85 - 26718 - 85 պետական ստանդարտին համապատասխան:

Կատարված փորձաքննությունների արդյունքները.

- |  |   |                 |
|--|---|-----------------|
| 1. Խոնավություն                            | - | 16.9 %          |
| 2. рН (հողի ռեակցիան)                      | - | 12.1 %          |
| 3. Ազոտ                                    | - | չի պարունակում, |
| 4. Ֆոսֆոր (P <sub>2</sub> O <sub>5</sub> ) | - | 2.2 %           |
| 5. Կալիում (K <sub>2</sub> O)              | - | 0.16 %          |

Նմուշի մեջ որոշվել է մաև կալցիումի քանակը՝ 50 մգ/էկվ, HCO<sub>3</sub> - 46.0 մգ/էկվ, մագնեզիում - 4.0 մգ/էկվ: Փորձաքննությունները կատարվել են 26428-85 պետական ստանդարտին համապատասխան:

Փորձաքննության արդյունքներից հետևում է, որ մոխիրը որպես օրգանական պարարտանյութ պիտանի չէ օգտագործման:

Նշված թափոնները 1200° ջերմաստիճանում վերամշակելուց հետո վտանգ չի ներկայացնում աղբամոցներում տեղադրելու:

Նշված թափոնը ջերմային վերամշակումից հետո իր մեջ պարունակում է ընդհանուր քանակի 30 % - ի չափով այրման չենթարկված մեխանիկական խառնուրդներ:

ՏՆՕՐԵՆ

Վ.ՊԱՎԹՅԱՆ



Հավատարմագրման վկայականի  
նշագիրը և համարը  
E83 AST-001.Q-0007-2011

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 20/08/20  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ք. Եջմիածին

20 օգոստոսի 2020թ

«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ-ը (հետագայում՝ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ), ի դեմս տնօրեն՝  
Խաչիկ Մողրովյանի մի կողմից և ՀՀ քաղաքացի

*Մինն Սարգիսի Հակոբյանը*

անձնագիր AK0540017, տրված 013-ի կողմից, 24/06/2010թ, սոցիալական  
քարտ 3003640089 հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ղալթաշեն 4թաղ., 3ա շենք, 28բն.  
(հետագայում՝ ԿԱՏԱՐՈՂ), մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի  
մասին

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ-ի ք.Եջմիածին, Սարգարայի խճուղի 4/1 հասցեում կատարել սույն պայմանագրի 1.2 կետում նշված աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ աշխատանքների դիմաց:
- 1.2 Կատարողը պարտավորվում է կատարել կեղտաջրերի հեռացման աշխատանքներ:
- 1.2.1 Կատարողը պատասխանատվություն է կրում իրեն հանձնարարված աշխատանքների որակի համար:
- 1.3 Կատարողը հաշվետու է անմիջականորեն «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Խաչիկ Մողրովյանին:
- 1.4 Աշխատանքների կատարման համար ժամկետ է սահմանվում 20/08/2020թ.-ից մինչև 31/08/2020 թվականը:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1 Կատարողը պարտավոր է՝
- 2.1.1 Աշխատանքները կատարել պատշաճ որակով, սույն պայմանագրի 1.4 կետում նշված ժամկետում:
- 2.1.2. Անձամբ կատարել աշխատանքները:
- 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝
- 2.2.1. Ստեղծել Կատարողի համար անհրաժեշտ պայմաններ աշխատանքները կատարելու համար:
- 2.2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝ ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

3. Վճարման պայմանները

- 3.1 Սույն պայմանագրով մատուցված ծառայությունների արժեքը կազմում է 100.000 /մեկ հարյուր հազար / ՀՀ դրամ, ներառյալ՝ հարկային պարտավորությունները:
- 3.2. Կատարողին վճարումը կատարվում է հաշվարկային ժամանակահատվածում կատարված աշխատանքների դիմաց:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

- 4.1 Պայմանագիրը կնքվում է 20/08/ 2020թ.-ից մինչև 31/08/2020 թվականը:
- 4.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու պահից:
- 4.3 Սույն պայմանագիրը դադարում է Պատվիրատուի և Կատարողի համաձայնությամբ կամ Կատարողի նախաձեռնությամբ:
- 4.4 Բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

**Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N 01-66**

**Ա Ղ Բ Ա Հ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Մ Ա Տ ՈՒ Ց Ե Լ ՈՒ**

ք. Էջմիածին

«01» ՀՈՒՆՎԱՐ 2021Թ.

Էջմիածին քաղաքի «Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկը, /հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ավագանու 18.12.2020թ. նիստ թիվ 12 որոշում թիվ 124-Ն որոշումը/, ի դեմս վարչության պետ՝ Ա.Մեղրոյանի /հասցեն՝ ք. Էջմիածին Մ.Մաշտոց 0 շենք/, ով գործում է ըստ Կանոնադրության, այսուհետ՝ «Կատարող» մի կողմից և Էջմիածին քաղաքի <<Էկոլոգիա Վ.Կ.Հ.>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ Խ. Մողրովյան հետագայում, «Պատվիրատու», մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1 «Պատվիրատուն» հանձնարարում է, իսկ Կատարողը՝ պարտավորվում է իր փոխադրական միջոցներով տեղափոխել «Պատվիրատուի» կենցաղային աղբը, այրումից առաջացած մոխիրը և արտադրական թափոնները:

1.2 «Պատվիրատուն» պարտավորվում է մատուցված ծառայության դիմաց «Կատարողին» վճարել իր կողմից զբաղեցրած տարածքի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ամսական 130 /հարյուր երեսուն/ դրամի չափով վճար:

1.3 Սույն պայմանագրի գինը կազմում է 792 000 դրամ / Յոթ հարյուր հինսուներկուս հազար / Հարյուր և անասական վճարը կազմում է 10 000 դրամ X 6.6 տ = 66 000 դրամ:

**2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները**

**2.1 «Կատարողը» պարտավոր է՝**

ա/ կենցաղային աղբի և արտադրական թափոնների տեղափոխման աշխատանքները կատարել «Պատվիրատուի» հետ համաձայնեցված գրաֆիկով՝ շաբաթական \_\_\_\_\_ անգամ,

բ/ աշխատանքները կատարել իր միջոցներով և աշխատուժով,

գ/ աղբի տեղափոխման աշխատանքները կատարել ժամանակին.

դ/ աղբահանության համար սահմանված վճարի փոփոխության դեպքում 15 օր առաջ զանգվածա լրատվության միջոցներով տեղեկացնել «Պատվիրատուին»:

**2.2 «Պատվիրատուն» պարտավոր է՝**

ա/ «Կատարողի» մատուցված ծառայության դիմաց վճարել սույն պայմանագրի 1.3-րդ կետում նշված գնին համապատասխան:

բ/ վճարումը կատարել յուրաքանչյուր ամիսը / եռամսյակը / մեկ անգամ՝ կանխիկ մուծման կամ բանկային փոխանցման միջոցով «Կատարողի» 900325151620 հաշվարկային հաշվին:

**2.3 «Պատվիրատուն» իրավունք ունի՝**

«Կատարողի» կողմից աղբահանությունը չկատարելու դեպքում չվճարել հաշվետու ժամանակահատվածի աղբահանության վճարը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով «Կատարողին» :



2.4 «Կատարողը» իրավունք ունի

ա/ «Պատվիրատուի» կողմից վճարումները ժամանակին չկատարելու դեպքում դադարեցնել աղբահանումը և այն վերսկսել վճարումից հետո:

3. <<Պատասխանատվություն>> վճարը չվճարելու դեպքում

3.1 <<Պատվիրատուն>> աղբահանության վճարի վճարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետի ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.072 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

4. Այլ պայմաններ

4.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 01.01.2022թ.

4.2. Սույն պայմանագրի որևէ կետի փոփոխություն կատարվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.3 Կողմերից մեկի նախաձեռնությամբ պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու համար նախաձեռնող կողմը պարտավորվում է 3 օր առաջ գրավոր տեղյակ պահել մյուս կողմին:

4.4 Պայմանագիրը կազմված է 2 /երկու/ օրինակից մեկական օրինակ տրվում է կողմերին, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

4.5 Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ԿԱՏԱՐՈՂ»

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»

Անվանումը- ԷՋՄԻԱԾՆԻ << ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ

ՎՈՍՈՒՆԱԼ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ >>

հասցեն - ք. Եջմիածին Մ.Մաշտոց 0

բանկը - Տեղ. գանձապետական բաժ.

Հ/Հ - 900325151620

ՀՎՀՀ - 04716461

հեռ. 5-26-99-17-1

ՊԵՏ. Ը. Մանուկյան



Անվանումը- <<Էկոլոգիա Վ.Կ.Հ.>>ՍՊ

հասցեն - Մարգարայի խճ. 4/1

բանկը - <<ՎՏԲ>> Հայաստան բանկ

Հ/Հ - 16017038839300

ՀՎՀՀ - 04719486

հեռ. - 094-20-88-28, 077-66-90-80

ՏԻՐԱՆ Խ. Մողղովյան



Հավելված 3  
ՀՀ կառավարության 2005 թվականի  
հունիսի 1-ի N 739-Ն որոշման



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ  
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ք. Երևան, Կառավարական տուն թիվ 2

« 10 » 12 2012 թ.

ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ N 7-ՎՎՎ

ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ  
Սեփականատեր

« Երևան ԷՎ ԵՎ ԵՎ » ՊՊԸ

(կազմակերպության / անհատ ձեռնարկատիրոջ / ֆիզիկական անձի լրիվ անունը / Ա.Ա.Հ.)

Տեղադրման վայրը

Ք.Վ. Մարտիրոսի Երզնկայի Երևանի ԷՎ ԵՎ ԵՎ ՎՎ

Լրիվ անվանումը

« Երևան ԷՎ ԵՎ ԵՎ » ՊՊԸ

Անվանական լարումը

10 (կՎ)

(կՎ)

Լարման տեսակը

Ֆուսիոնալ

(հաստատում / փոփոխական / ինստիտյուն / այլ)

Լարման ֆազերի քանակը

3 (կՎ)

Հզորությունը

180 (կՎԱ)

(կՎԱ; կՎտ)

Էլեկտրասնման աղբյուրը

« Գազ » 35/10 կՎ ԵՎ ԵՎ 10 կՎ ԵՎ ԵՎ

Ակտ-կարգադրագրի համարը և ամսաթիվը

12-ՎՎՎ; 10.12.2012թ.

Տեխնիկական պայմանների համարը և ամսաթիվը

15-ՎՎՎ; 15.06.2011թ.

**Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

« Երևան ԷՎ ԵՎ ԵՎ » ՊՊԸ


(կազմակերպության / անհատ ձեռնարկատիրոջ / ֆիզիկական անձի լրիվ անունը / Ա.Ա.Հ.)

« Երևան ԷՎ ԵՎ ԵՎ » ՊՊԸ

(Էլեկտրատեղակայանի լրիվ անվանումը)

տեխնիկական վիճակը համապատասխանում է տեխնիկական կանոնակարգերի պահանջներին:

Թույլատրվում է էլեկտրատեղակայանը գործարկել:



Ղեկավար

(ստորագրություն)

(Վզգահող, Ա. Հ.)

Գաղատարի

(Կատարողական-տեխնիկական)

փաստաթղթեր

Ներմաշինի Տարբ. ցուց. Գրիբոյնցով

« Յկուցիա ՎԿ Դ » ԱԾԾ

\_\_\_\_\_ ԳՏԱ

\_\_\_\_\_ ԱԾԾ

Խախտագիծ N Ն 0033

Ինհարարական կազմակերպություն "Պան օնլայն" ԱԾ

(հասցեն անվանումը)

Բյուջետ Արմավիրի Տարածաշրջանի Գործընկերության Կազմակերպություն Հայաստանի Հանրապետություն ԱԾ

(հասցեն անվանումը)

**I Գազանուղի բնութագիրը**

Ընդհանուր ներկարությունը (մետր)	Այդ բվում		Տրամագիծը	Բանվորական ճնշումը	Մեկուսիչի տեսակը	Գազանուղի վրա տեղադրված (հատ)			
	ստորգետնյա	վերգետնյա				Փակող սարքեր		Գազահորեր	Հսկիչ-չափիչ կետեր
						Տեսակը	Քանակը		
705	—	705	10855		յուզանուղի	1	—	G-160	
65	—	65	3255						

**II Օգտագործվող նյութերի տվյալները**

Նյութերի անվանումը	Տրամագիծը	Պատի հաստությունը	Արտադրող գործարան	Մակնիշը և պետ. ստանդարտի N	Հավաստագրի N և թողարկման ժամկետը
յուզանուղի	10855	455	Արմավիրի Գործընկերություն	ԳՕՄՏ 10701-91	1173 30.09.08

Հաստատում եմ չին կազմակերպության "Պան օնլայն" ԱԾ կողմից

(անվանում, պաշտոնը, ստորագրություն)



Ծանոթություն-

հավաստագրի բնագիրը (խողովակ, էլեկտրոդ, մեկուսիչի լարերատոր եզրակացությունը, կարբիդ, թթվածին և այլն) պահվում է չին կազմակերպությունում:

«16» հունիս 2008թ.

# T & Z GMBH

KOPERNIKUSSTRASSE 53, 08058 ZWICKAU, GERMAN

TEL: 0375 - 27767 - 40 FAX: 0375 - 27767 - 42

На Ваш запрос дирекция T&Z подтверждает что печная линия VE100 кроме клинических отходов и лекарств может утилизировать


1. Производственные отходы
2. Пищевые отходы
3. Химические отходы, бытовая химия и.т.д....
4. Органические отходы
5. Отходы от убоя животных

Директор T&Z 000

**T & Z GmbH Zwickau**  
Kopernikusstr. 53-55, D-08058 Zwickau  
Postfach 200834, D-08005 Zwickau  
Tel: 0375 - 27767 - 40 Fax: 0375 - 27767 - 42



К. Хвалик

Ֆիլտրի համապատասխան կողերով

	<b>Operating manual</b>		Project: <b>Armenien</b>	
	<b>IFZW Zwickau</b>		Ref. no.: <b>2299.00/07</b>	
	De-dusting of crematorium		Order no.: <b>07000422/3403-1</b>	

Item	Art. no.:	Denomination	s/w	Piece
201	07201729	Support cage B-04 2,5	S	96
202	03605412	Flat-bag M-NGN/40/30	S	96
203	07201171	Mouthpiece 1.4306, Form A	S	96
204	07201593	Assembly fork (2,3)		1
205	07201382	Assembly tool		1
206	07201271	Mounting device		1

\* S = Spare part / W = Wear part



ETL\_XXX\_D\_11.10.06

Date: 01.10.2007	Prepared: Fra	File: ETL_DF-Filter_gb.PMD	Revision: 0
<b>LÜHR FILTER GmbH &amp; Co. KG</b>		Chapter: 3.5.4 Spare parts list	Page: 3 of: 4

**X.Y**

**ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆՔ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՉԱՓԱԳՐՈՒՄ**

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

<<ԷԿՈԼՈԳԻԱ Վ.Կ.Հ>> ՍՊԸ-ի պատվերով Գրիբոյեդով համայնքում կատարվել է գեոդեզիական աշխատանքներ,որից պարզվել է, որ նշված բնակելի տներից ծխնելույզների հեռավորությունը նշված է հատակագծում, որի միջին հեռավորությունը կազմում է 330,0մ:

ԱԶ <<ԿԱԴԵՆ ՄԱՇԻՆՅԱՆ>>



19.08.2019թ.

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

10.09.2020թ

Էջմիածին համայնք

2020թ. սեպտեմբերի 10-ին, ժամը 12.00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ: ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով /առաջին փուլ/ «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Էջմիածին համայնքում՝ քաղաքապետարանում նախատեսվող վտանգավոր թափոնների ոչնչացման համալիրի վերազինման վերաբերյալ հանրային քննարկում:

**Ելույթ ունեցան.**

Բացման խոսքով հանդես եկավ Էջմիածին քաղաքապետարանի ներկայացուցիչ **Մարիամ Պողոսյանը:**

**Արմ Ի Այ Էյ՝ «Նովա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Թ. Նուրիջանյանը** ներկայացրեց նախատեսվող գործունեության բնութագիրը, գործունեությունը շրջակա միջավայրի վրա: Վերջինս նշեց, որ գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Համաձայն Օրենքի 14 հոդվածի 4-րդ մասի 6)-րդ կետի, ա. ենթակետի՝ դասվում է Ա կատեգորիայի, որպես թափոնների հավաքում և տեղափոխում: Նշվեց, որ ընկերությունն աշխատում է 2009թ.-ից, 2-րդ անգամ՝ ընդլայնման համար 2019թ. ստացել է վառարանի միջոցով կլինիկական թափոնների այրման թույլտվություն:

Այժմ նախատեսում է կատարել այրման կայանքի վերազինում «Лямбда-датчик LT1» տեղադրման միջոցով, ինչը հնարավորություն կտա կայանքում թթվածնային հոսքի արագացման շնորհիվ ակտիվացնել այրման գործընթացը: Այն հնարավորություն է ստեղծելու արտադրական, աննդային, քիմիական, կենցաղային, օրգանական թափոնների, ինչպես նաև կենդանիների սպանդի մնացորդների ոչնչացում՝ այրման միջոցով:

Նշվեց նաև, որ նախատեսվող գործունեությունը նախատեսում է մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք կմեղմեն կամ կկանխարգելեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները:

**Խաչիկ Մողրովյանը՝** «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊ ընկերության տնօրենը ներկայացրեց ներկայումս կայանքի աշխատելու ռեժիմը, թափոնների հավաքագրման, տեսակավորման, վառարան բեռնման, վերազինման արդյունքում նոր աշխատատեղերի ստեղծման վերաբերյալ **տեղեկատվությունը: Պատասխանեց նաև համայնքի ներկայացուցիչների՝** Լևոն Կարապետյանի կողմից բարձրացված հարցերին, մասնավորապես կենցաղային սուրճավայր մոխրի տեղափոխման, յուղային թափոնների այրման գործընթացի վերաբերյալ:



**Արմեն Հարությունյանը** քաղաքապետարանի քաղաքաշինության եւ հողօգտագործում բաժնի 1-ին կարգի մասնագետը, «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊ ընկերությունը բնութագրեց որպէս բարեխիղճ ձեռնարկող: Վերջինս, աշխատանքային պարտականությունների շրջանակում մի քանի անգամ մասնակցել է տվյալ ընկերության նախաձեռնած հանրային լուսմներին, ինչպէս նաև՝ շրջել է ընկերության տարածքում, ծանոթացել կայանքի աշխատանքին և պայմաններին:

Հանրային լսման ընթացքում, լսելով «Նովալ»ՍՊԸ-ի ներկայացուցչի և «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ-ի տնօրենի մանրամասն զեկույցը նախատեսվող գործունեության ընթացքի մասին և ստանալով գործարանի աշխատանքի արդյունքում ազդակիր համայնքների Էկոլոգիայի վրա հնարավոր ազդեցության մասին անհանգստացնող հարցերի պատասխանները, քննարկման մասնակիցները համայնքի ներկայացուցիչների հետ համատեղ, դրական գնահատեցին ընկերության գործունեության ընդլայնման հնարավորությունը վերազինման եւ նախաձեռնած անհրաժեշտ քայլերի արդյունքում՝ տալով նախնական համաձայնություն:

Վարող – Էջմիածնի համայնքապետարանի  
աշխատակազմի քարտուղար-Գ. Հարությունյան



Արձանագրող – Հ. Ալեքսանյան

Ձեռնարկող - «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ



Մասնակիցների ցանկ

ՀՀ Արևմտյան մարզի Էջմիածին քաղաքի վարչական տարածքում՝ «Էկոլոգիա Վ. Կ. Հ» ՍՊ ընկերության վտանգավոր թափոնների վնասագերծման համալիրի վերազինման վերաբերյալ հանրային առաջին քննարակման 10.09.2020թ.

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Տեղեկատվություն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Եսթրախյան Բաճարա	«Է. Կ. Հ» ՍՊ	1 093 14 8 4 0 9 1	
2.	Սիմոնյան Յուրայ	«Է. Կ. Հ» ՍՊ	+374 93 884625	
3.	Մարտիրոսյան Վահագն	ՎԵՄԻՍ	077 6 6 90 80	
4.	Կարսյան Լուսինե	Կարսյան Լուսինե	094 44 90 50	
5.	Վահանյան Գևորգյան	Վահանյան Գևորգյան	083 84 56 97	
6.	Սարգսյան Զարգարյան	Սարգսյան Զարգարյան	093 93 61 00	
7.	Սարգսյան Կարոյան	Սարգսյան Կարոյան	093 08 03 77	
8.	Սարգսյան Կարոյան	Սարգսյան Կարոյան	093 82 10 28	
9.	Սարգսյան Կարոյան	Սարգսյան Կարոյան	093 41 92 12	
10.	Սարգսյան Կարոյան	Սարգսյան Կարոյան	077 81 41 4	
11.				
12.				
13.				
14.				
15.				
16.				
17.				
18.				